AZG NEW PDF.qxd 2/24/2010 22:59 Page 1


Ազգ
Azg

25 ՓԵՏՐՈՒԱՐ 2010 ՀԻՆԳՇԱԲԹԻ 33 (4414)

ISSN: 1829-1651


# Իրան-Հայաստան նավթատար է կառուցվելու

Իրանի նավթի փոխնախարար Նուրեդին Շահնազի-զադեն հայտարարել է, որ Հայաստանն ու Իրանը համաձայնել են կառուցել 350 կիլոմետրանոց խողովակաշար, որը տարեկան Հայաստան «կբերի» 70 հազար բարել նավթամթերք: Բացի դրանից, իրանցի փոխնախարարը նշել է, որ Իրանը ցանկություն ունի հայ-իրանական սահմանին տերմինալ կառուցելու, որի նպատակն է մեծացնել նավթամթերքի արտահանման ծավալը:

Ըստ իրանական լրատվամիջոցների՝ վերոհիշյալ նավթատարի կառուցման համար անհրաժեշտ կլինի 350 մլն դոլար:

# Ո՞րն է ամենաշահութաբեր «բիզնեսը» Հայաստանում

## *Կամ ինչպես մի քանի րոպեում նոտարական վավերացման համար գրպանել 15-25 հազար դրամ*

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Հայաստանի կառավարության ծրագրերից է մեր երկիրը «բիզնես գերազանցության կենտրոն» դարձնելը: Ավելի պարզ լեզվով՝ մեր երկրում ստեղծվեն այնպիսի պայմաններ, որ նոր գործը սկսող գործարարն առանց ավելորդ քաշքշուկների, արագ գրանցի իր ձեռնարկությունը, հետագայում պետական համապատասխան մարմինների՝ պետռեգիստրի, հարկային եւ մաքսային ծառայությունների, նոտարական գրասենյակների, կադաստրի աշխատակիցներից ստանա անհրաժեշտ տեղեկատվությունն ու սպասարկումը, հնարավորինս քիչ շփումներ ունենա պաշտոնյաների հետ իր գործունեության ընթացքում եւ այլն: Սակայն այս նպատակները հռչակած կառավարությունը ոչ մի կերպ չի տեսնում այն բացահայտ կողոպուտը, որին ամեն օր, ամեն րոպե ենթարկվում են մեր քաղաքացիներն ու գործարարները Հայաստանի բոլոր, ընդգծում ենք, առանց բացառության բոլոր նոտարական գրասենյակներում:

Հակառակ մեր բոլորիս պատկերացումներին, Հայաստանում, ամենաշահութաբեր բիզնեսը ոչ թե բնական մենաշնորհներ ունեցող ոլորտներն են (գազ, ջուր, էլեկտրաէներգիա, հեռահաղորդակցություն), ո՛չ թե շաքարավազի կամ հացահատիկի արդեն արհեստական մենաշնորհ հանդիսացող ներմուծումը, ո՛չ շինարարությունը, ո՛չ զանգվածային սպառման ապրանքների վաճառքը, այլ նոտարական թաղանչիական «բիզնեսը»: Ընդ որում, այն ոչ միայն գերշահութաբեր է, այլեւ բացարձակ զերծ ռիսկից, նախնական եւ ընթացիկ ներդրումներից, գովազդի եւ մարկետինգի ծախսերից: «Բիզնես», որը մշտապես ունի բազմաթիվ հաճախորդներ, որոնք այլ ելք չունեն նոտարի «ոտը չգալու»: Գուցե կառավարության եւ մասնավորապես արդարադատության նախարարի համար հետաքրքրական կլինի, թե ի՞նչ է տեղի ունենում նոտարական գրասենյակներում եւ ի՞նչ գումարներ են կլանում քաղաքացիներից եւ գործարարներից պետական կոչված նոտարները, որոնց գործունեությանը բախվելու դժբախտություն ենք ունեցել շարքային քաղաքացիներս:

Տես էջ 3

**ԸՆԴԴԵՄ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ**

# Խոջալու. կեղծ պատմություն

**Խոջալուի դեպքերի վերաբերյալ ադրբեջանական կողմի շարունակվող քարոզչությունը կառուցված է եղել կեղծ լուսանկարների, տեսանյութերի ու ցուցակների վրա: «Այլատյացության կանխարգելման նախաձեռնությունը» ուսումնասիրել է Ադրբեջանի ներկայացրած փաստերը: Ուսումնասիրությունների շարժառիթն ադրբեջանական լրատվամիջոցների ցուցադրած լուսանկարներն էին, որտեղ 2008-ի օգոստոսին տեղի ունեցած ռուս-վրացական պատերազմի վրացի զինվորների լուսանկարները ներկայացրել էին որպես Խոջալուի իրադարձությունների ժամանակ զոհված ադրբեջանցի զինվորների նկարներ:**

**Ի դեպ, ադրբեջանական լրատվամիջոցներն այդ լուսանկարները վերցրել էին Ռուսաստանի կոմկուսի պաշտոնական կայքէջից: Նախաձեռնությունը հայտնաբերել է մի քանի տասնյակ կեղծ լուսանկարներ, որոնք տեղադրված են Xocali.net կայքում:**

**Դատական փորձագետները պարզել են, որ ադրբեջանական կայքերում հայտնված վիրավոր երեխաները վնասվածքներ են ստացել ավտոբուսի պայթյունից, մեկ այլ լուսանկարում զոհված որդիների կողքին լացող կինն ազգությամբ քուրդ է, նրա երեխաները զոհվել են երկրաշարժի ժամանակ:**

**Ադրբեջանական կայքերում Խոջալուի դեպքերի մասին պատմող հոդվածների կողքին հայտնվել են Կոսովոյի պատերազմի մասին լուսանկարներ ու մահացած զինվորներ: «Քարոզչության հիմնական մասը կեղծիք է: Ֆոտոմոնտաժ, բեմադրություն, սեփական դիակների անպատվություն», ասաց նախաձեռնության անդամ Արմինե Ադիբեկյանը:**

**Հայտնաբերվել են նաեւ աղաղակող կեղծիքներ զոհերի անվանացուցակում: Ադրբեջանական պաշտոնական կառույցների ներկայացրած ցուցակներում միեւնույն մարդու անունը ներկայացվում է լեզվական տարբեր հնչողություններով ու մատուցվում որպես առանձին անուն: Ի դեպ, ՀԿ-ն իր բացահայտումներն արել է՝ հիմնվելով ադրբեջանական աղբյուրների վրա: Կայքն իր վերլուծությունները կթողարկի մի քանի լեզվով: Վերջնական տեսքի են բերվել ռուսերեն, անգլերեն, ադրբեջաներեն տարբերակները: Նախատեսվում է թողարկել նաեւ ֆրանսերեն, գերմաներեն, պարսկերեն տարբերակներ:**

**Նյութերը հայկական կողմը կտարածի ողջ աշխարհում, կուղարկեն դիվանագիտական առաքելություններին, միջազգային կազմակերպություններին՝ ՄԱԿ, ԵԽԽՎ:**

**Տեղեկատվության անվտանգության հարցերով փորձագետ, նախաձեռնության հեղինակ Սամվել Մարտիրոսյանի խոսքերով, Ադրբեջանը դիմում է կեղծիքների՝ սեփական հանցագործությունները թաքցնելու նպատակով՝ Խոջալուի վերաբերյալ աղմուկ են բարձրացնում, որպեսզի անուշադրության մատնեն Սումգայիթյան ջարդերը:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Դեսպան Պոպովը մնում է Մոզամբիկում

Մոզամբիկում Ռուսաստանի Դաշնության դեսպան Իգոր Պոպովը չի հաստատում այն տեղեկությունը, թե իրեն նշանակելու են ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցով ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահ Յուրի Մերզլյակովի փոխարեն:

Ադրբեջանական «Թրենդ» գործակալության տեղեկացմամբ՝ Մոզամբիկում եւ Սվազիլենդում Ռուսաստանի դեսպանության քարտուղար **Եկատերինա Միխալեւիչը** հայտարարել է, թե Պոպովը իր համանախագահ նշանակվելու լուրի առնչությամբ խոսել է ինչ-որ սխալի մասին: «Դեսպանը որեւէ կերպ կապված չէ ԵԱՀԿ Մինսկի խմբի հետ ու զարմացել է նման տեղեկությանը ծանոթանալով», ասել է Եկատերինա Միխալեւիչը:

Երեկ **«Ազգը»** հրապարակել էր News.am կայքէջի տեղեկատվությունը հիշատակված լուրի առնչությամբ: Կայքէջի աղբյուրների համաձայն, ռուսաստանցի համանախագահ Յուրի Մերզլյակովին շուտով պիտի փոխարինել Իգոր Պոպովը: «Ռուսաստանի Դաշնության արտգործնախարարության հավաստի դիվանագիտական աղբյուրների համաձայն, 2005-ից Մոզամբիկում եւ համատեղությամբ Սվազիլենդի թագավորությունում Ռուսաստանի դեսպանությունը գլխավորող Պոպովը շուտով կարող է դառնալ համանախագահ», նշել էր գործակալությունը իր տեղեկության մեջ: Մերզլյակովը, նույն հղմամբ, կարող էր նշանակվել Էստոնիայում Ռուսաստանի դեսպան:

Նույն աղբյուրի համաձայն, մարտի վերջին կարելի է սպասել տարածաշրջան ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների այցելությանը, ու որքան էլ հավաստի լինեն Ռուսաստանի ԱԳՆ դիվանագիտական աղբյուրների տարածած տեղեկությունները, դժվար թե ռուսաստանցի համանախագահողի դերում չտեսնենք Յուրի Մերզլյակովին:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների այցելության ժամանակացույցի առնչությամբ որեւէ նորություն չի հայտնվում:

Ա. Հ.

# Ղարաբաղի հարցում ժամանակը «սեղմում է»



**Բաքվում, խոսելով ղարաբաղյան հակամարտության մասին, հենց այսպես է արտահայտվել Եվրոմիության հատուկ ներկայացուցիչը Հարավային Կովկասում՝ Պիտեր Սեմնեբին: Ինչպես նախորդ համարում տեղեկացրել էր «Ազգը», Սեմնեբին փետրվարի 23-ից եռօրյա այցով Ադրբեջանում է: «Իմ այցելության նպատակներից է նախապատրաստել Եվրոմիության որոշ նոր ղեկավարների այցերը տարածաշրջան», նշել է Սեմնեբին՝ «Թրենդի» տեղեկացմամբ: Ղարաբաղի հարցի վերաբերյալ ԵՄ-ի ներկայացուցիչը նկատել է, որ «տարածաշրջանում իրավիճակը փոփոխվում է», եւ ստատուս քվոն չի կարող անվերջ շարունակվել. «Ես հույս ունեմ, որ այն ազդակները բանակցային փուլում, որոնք արձանագրվեցին նախորդ տարի, կպահպանվեն եւ կբերեն զգալի արդյունքների: Համենայն դեպս, մենք ամեն ինչ կանենք դրա համար, մանավանդ որ ժամանակն էլ սեղմում է», հայտարարել է Սեմնեբին: Հետաքրքրական է, որ «ժամանակի մասին» ԵՄ-ի նման կառույցի ներկայացուցիչը առաջին անգամ խոսում է Բաքվում. միգուցե Բաքուն առավե՞լ կարիք ունի «հիշելու ժամանակի մասին»:**

**Իր այցի շրջանակներում ԵՄ-ի պաշտոնյան հանդիպումներ կունենա ինչպես Ադրբեջանի ղեկավար շրջանակների, այնպես էլ այլ քաղաքական ուժերի ներկայացուցիչների հետ:**

Հ. Ա.

# Ռուսաստան-ԵՄ հանդիպմանը կքննարկվեն նաեւ Կովկասի հարցերը

**Փետրվարի 24-ին Մոսկվայում տեղի ունեցավ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի հանդիպումը Եվրոմիության արտաքին հարաբերությունների եւ անվտանգության հարցերով ներկայացուցիչ Քեթրին Էշթոնի հետ: Հիմնականում քննարկվել են Ռուսաստան-ԵՄ հարաբերությունները՝ երկկողմ նոր համաձայնագրի նախապատրաստումը, ինչպես նաեւ առանց վիզայի ռեժիմին անցնելու հարցերը:**

**Ըստ ՌԴ ԱԳՆ-ի ներկայացուցիչ Անդրեյ Նեստերենկոյի՝ անդրադարձ է արվել նաեւ մերձավորարեւելյան հակամարտությանը, Աֆղանստանի հարցերին, Արեւելյան Եվրոպայում տիրող իրավիճակին, ինչպես նաեւ քաղաքական զարգացումներին Հարավային Կովկասի տարածաշրջանում:**

# «Թուրքիան հարցն է, Ամերիկան՝ պատասխանը»

25-րդ անգամ այս տարվա ապրիլի 25-ին՝ կիրակի օրը, հազարավոր ամերիկահայեր հավաքվելու են Նյու Յորքի Թայմս սքուերում՝ նշելու Մեծ եղեռնի 95-րդ տարելիցը, տեղեկացնում է այդ առթիվ հրապարակված մամլո հաղորդագրությունը: Այս տարվա թեման է լինելու՝ «Թուրքիան հարցն է, Ամերիկան՝ պատասխանը»: Նախատեսվում է, որ մի շարք քաղաքական պաշտոնական անձնավորություններ ելույթներ կունենան հրապարակում:

Միջոցառման գլխավոր հովանավորն է «Վարդանանց ասպետներն ու դուստրերը» կազմակերպությունը: Հովանավորներն են ՀԲԸՄ-ն, Ամերիկայի հայկական համագումարը, Ամերիկայի Հայ դատի կոմիտեն, ՌԱԿ-ը եւ Ամերիկայի հայկական խորհուրդը, աջակցում են նաեւ Հայաստանյայց եկեղեցու թեմերը, Ամերիկայի հայ միսիոներական ասոցիացիան, Հայ ավետարանչական միությունը, Հայ կաթոլիկների եպարխիան եւ Հայ երիտասարդական մի քանի կազմակերպություններ:

Հ. Ծ.

# «Թուրքիայի համար լավագույն տարբերակը Արձանագրությունների վերապահումներով վավերացումն է»

## *Հայտարարում է թուրք վերլուծաբանը*

**Հ. ՉԱՔՐՅԱՆ**

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման գործընթացը հետզհետե կանգնում է փակուղու առջեւ: Թերեւս դրա հիմքում թուրքական կողմի Արձանագրություններով պայմանավորված առաջադրանքներն են: Արձանագրություններին Հայաստանի ղեկավարության սառնասիրտ մոտեցումն ու Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցերում հաստատակամությունը կասկածի տակ դրեցին թուրքական առաջադրանքների իրականացումը: Ի պատասխան դրան Թուրքիան հետքայլ կատարեց նորմալացման գործընթացում:

Դա հատկապես նկատելի դարձավ վարչապետ Էրդողանի Վաշինգտոն, ապա եւ Մոսկվա կատարած այցելություններից հետո: Հետքայլը պատճառաբանվեց ՀՀ Սահմանադրական դատարանի՝ Արձանագրություններին առնչվող որոշումով, թե դա նախապայմաններ է պարունակում: Այս պատճառաբանությունը, սակայն, չարժանացավ միջազգային ուժերի հավանությանը, ինչպես չէին արժանացել հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման եւ Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման գործընթացները շաղկապելու Էրդողանի նկրտումները:

Առաջադրանքների ձախողման պայմաններում Թուրքիան որդեգրեց նորմալացման գործընթացը փակուղու առջեւ կանգնեցնելու պատասխանատվությունը Հայաստանի վրա բարդելու քաղաքականություն: Ըստ երեւույթին, միջազգային աջակցության բացակայությամբ նաեւ այս քաղաքականությունն է ձախողվում: Թերեւս ձախողման գիտակցությամբ է գրված պրոֆ. **Հաքան Յավուզի** «Թուրքիայի արտաքին քաղաքականության փակուղին. արձանագրություններ եւ լուծում» վերնագրով «Զամանի» փետրվարի 24-ի համարում հրապարակված հոդվածը, որը ներկայացնում ենք մասնակի կրճատումներով:

Տես էջ 3

AZG NEW PDF.qxd 2/24/2010 23:39 Page 1



# Գազի սակագների բարձրացման դեպքում անապահով շերտերի փոխհատուցման տարբերակներ են որոնվում

Երեկ Ազգային ժողով-կառավարություն հարցուպատասխանի ընթացքում հնչած հարցերից ամենաուշագրավներից էր գազի սակագնի բարձրացման խնդիրը, որը տարբեր ռակուրսներով բարձրացրին **Ստյոպա Սաֆարյանն** ու **Արծրունի Աղաջանյանը**: Հարցին, էլի տարբեր ռակուրսներով, պատասխանեցին վարչապետ **Տիգրան Սարգսյանն** ու ֆինանսների նախարար **Տիգրան Դավթյանը**: Վարչապետը նախ հարցը դիտարկեց այն պատուհանից, թե հենց պատգամավորներն են խորհրդարանում օրենք ընդունել Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անկախության, այդ թվում՝ քաղաքական միջամտություններից զերծ պահելու վերաբերյալ, եւ հիմա էլ պետք է ապահովվեն այդ հանձնաժողովի օբյեկտիվ եւ օրենքից բխող որոշումների համար անհրաժեշտ պայմանները. «Այդ պատճառով մենք զերծ ենք մնալու գնահատականներից, մանավանդ հանձնաժողովը դեռ պաշտոնական որոշում չի կայացրել», ասաց վարչապետ Սարգսյանը՝ ավելացնելով, որ գների բարձրացման հետեւանքով առաջացող խնդիրները կառավարության ուշադրության կենտրոնում են: Բացի այդ, երկրի նախագահը հանձնարարել է կառավարությանը առաջարկություններ մշակել՝ մեղմացնելու գների բացասական ազդեցությունը հատկապես սոցիալապես անապահով խավերի համար: Իսկ Տ. Դավթյանը նշեց, որ սակագների բարձացումը (գազի, խմելու ջրի եւ այլն) այն ծախսերի ու ներդրումների պատճառով է նաեւ, որոնք անում են այդ ոլորտները կառավարողները, նրանց կատարած ծախսերն արտացոլվում են սակագներում: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը խնդիրն ուսումնասիրում է եւ չհիմնավորված թանկացում թույլ չի տա, իսկ երկրի նախագահի հանձնարարականով՝ անապահով շերտերին սակագների բարձրացման փոխհատուցման տարբերակները եւս քննարկվում են:

ՀՀ արտգործնախարար **Է. Նալբանդյանը** հերթական անգամ պատասխանեց հայ-թուրքական Արձանագրությունները թուրք պաշտոնյաների բարձրաձայնած դիրքորոշումներում ԼՂ կարգավորման հետ կապելու հարցին (Վարդան Խաչատրյանը հարցը տվեց). չէ, էլի, նետ, կապված չեն՝ որ կապված չեն, հերթական անգամ այս ենթատեքստով պատասխան հնչեցրեց արտգործնախարարը՝ նշելով, որ կողմերը փոխըմբռնմամբ բանակցելով են եկել Արձանագրությունների ստորագրմանը. «Եթե թուրքական կողմը արդեն Արձանագրությունները ստորագրելուց հետո նախապայմանների մասին է խոսում, դա արդեն Թուրքիայի խնդիրն է՝ համապատասխան հետեւանքներով», ասաց նա:




### Արձանագրությունների հետ կապված լրացումն ընդունվեց

Երեկ շարունակեց քննարկվել «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի փոփոխությունը, որի մասին խմբակցություններից արտահայտվեցին միայն «Ժառանգություն» ու ՀՅԴ-ն: «Ժառանգություն»՝ ի դեմս խմբակցության ղեկավարի, դեմ էր այս լրացմանը՝ կիսատ քայլ անվանելով եւ պայմանագրերի կնքման ընթացակարգերը դադարեցնելու (կասեցնելու) ոչ լավագույն ճանապարհը համարելով:

ՀՅԴ-ից Արմեն Ռուստամյանը, որ նաեւ գլխադասային հանձնաժողովի նախագահն է, նկատեց, որ միջազգային պայմանագրերը վավերացնելու մեր գործիքներն անկատար են: Նա առաջարկում էր օգտագործել սահմանադրությամբ եւ օրենքներով տրվող հնարավորություններն այնպես, որ Ազգային ժողովը կարողանա լիարժեք աշխատել դաշտում՝ օգնելով մեր պաշտոնյաներին արտաքին քաղաքականություն իրականացնելիս՝ վերապահման իրավունքն ամրագրել օրենքով: ՀՅԴ-ի առաջարկած փոփոխությունները հենց դրան էլ վերաբերում են. վերապահումների իրավունքն ամբողջ աշխարհում օգտագործվում է հենց միայն դրա համար՝ վերապահումներով երկիրն իր շահերը պաշտպանելու հետ կապված հայտարարություններ է անում, վերապահումներ է անում.« Ինչո՞ւ ԱԺ-ն չպետք է ունենա իր կողմից վերապահում անելու հնարավորություն, ինչո՞ւ պետք է վերապահումների հնարավորությունը չսահմանենք հենց օրենքով, որ հետագայում իմ երկիրը միջազգային դատարաններ քարշ չտան՝ տարբեր մեկնաբանություններ դեմ տալով եւ պահանջելով, որ մենք ենթարկվենք իրենց մեկնաբանություններին», ասաց նա:

Արտգործնախար Է. Նալբանդյանն իր եզրափակիչ ելույթում անդրադարձավ քննարկման ժամանակ բարձրացված հարցերին: Ասաց, որ միջազգային պայմանագրի վերաբերյալ հանրությանն իրազեկելու պարտավորություն նախատեսված չէ, բայց Հայաստանի նախաձեռնությամբ 6 շաբաթ ստորագրումից առաջ հրապարակվեցին հայթուրքական Արձանագրությունները, դա աննախադեպ քայլ է, որովհետեւ որեւէ երկրում միջազգային պայմանագրեր կնքելու դեպքում նախապես ստորագրումից առաջ պայմանագրերի նախագծերը չեն հրապարակվում, հրապարակվում են ստորագրումից հետո: Կասեցման ընթացակարգերի վերսկսման մեխանիզմի ամրագրման առաջարկը (Տ. Թորոսյանի առաջարկն էր) ընդունելի համարեց՝ դրա վերաբերյալ երեկ արդեն համապատասխան առաջարկ էր ներկայացվել պատգամավորներին: Իսկ միջազգային պայմանագրերի կնքման ընթացակարգերի կասեցման դեպքում՝ այդ պայմանագրի կնքման ընթացակարգերը կարող են ՀՀ նախագահի կողմից վերսկսվել նշված իրավասու անձանց եւ մարմինների նախաձեռնությամբ եւ սահմանված կարգով (էլի Տիգրան Թորոսյանի առաջարկին էր ընթացք տրվում այդպիսով): **Դալլաքյանի** առաջարկը՝ կանոնակարգը եւս փոփոխել, Նալբանդյանը նույնպես հնարավոր համարեց՝ եթե պատգամավորները գտնեն, նա առաջարկեց փոփոխությունը հաստատելուց հետո այս հարցին անդրադառնալ առանձին:

Վերապահումների վերաբերյալ ՀՅԴ նախաձեռնությունն էլ կառավարությունը կուսումնասիրի եւ ընդունված կարգով արձագանք կտա:

Նա եւս, ինչպես հարակից զեկուցող **Շիրակ Թորոսյանը**, առաջարկեց այս լրացման երկրորդ ընթերցմամբ քննարկումը կազմակերպել առաջին ընթերցմամբ ընդունումից 24 ժամ հետո:

ԱԺ նախագահ **Հովիկ Աբրահամյանը** առաջարկը քվեարկության դրեց, հետո նաեւ քվեարկվեց փոփոխությունն ու ընդունվեց: Այսօր այս լրացումը կշարունակեն քննարկել երկրորդ ընթերցմամբ:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Արթուր Բաղդասարյան-Ռաուլ Լուցենբերգեր հանդիպում

Հայաստանում Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության ղեկավար, դեսպան Ռաուլ Լուցենբերգերի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հանդիպում «Օրինաց երկիր» կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանի հետ, որին մասնակցում էին նաեւ Հայաստանում Եվրոմիության անդամ երկրների դեսպանները: Բարձր գնահատելով Եվրոմիություն-Հայաստան քաղաքական համագործակցությունը, **Արթուր Բաղդասարյանը** ներկայացրել է կուսակցության ներքին եւ արտաքին քաղաքականության գերակա ուղղությունները, կարեւորելով երկրում տեղի ունեցող բարեփոխումների եւ զարգացումների գործընթացը:

Պատասխանելով հանդիպման մասնակիցներին հետաքրքրող հարցերին՝ Արթուր Բաղդասարյանն անդրադարձել է Հայաստանում ժողովրդավարության կայացման գործում կուսակցության գաղափարական մոտեցումներին եւ քաղաքական ներդրմանը:

Հանդիպման ընթացքում ծավալվել է քննարկման լայն շրջանակ՝ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող ներքին եւ արտաքին քաղաքական հարցերի շուրջը:

ՕԵԿ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴԴԵՄ ՀԵՐՅՈՒՐԱՆՔՆԵՐԻ

# Ղարաբաղի «մեջ» են նաեւ Սումգայիթը, Բաքուն, Գանձակը...

**Սումգայիթում եւ Բաքվում ադրբեջանցիների իրականացրած հայ ազգաբնակչության ջարդերին Բաքուն միշտ հակազդել է Խոջալուում իբր թե իրականացված «ադրբեջանցիների ջարդերով»: Ընդ որում, հենց ադրբեջանական աղբյուրներն այդ դեպքերի վերաբերյալ խիստ հակասում են իրար, նույնիսկ այն տեղեկությունների մեջ, որոնք ադրբեջանցիների ջարդը վերագրում են հայերին, բազմաթիվ են, մեղմ ասած, թերությունները: Սակայն ադրբեջանական քարոզչամեքենան շարունակում է ամբողջ աշխարհով ահազանգել՝ «Խոջալուում հայերն իրականացրել են ադրբեջանցիների ցեղասպանություն»: Այս, ինչպես նաեւ Բաքվում եւ Սումգայիթում իրականացված հայերի ջարդերի տարելիցի կապակցությամբ ՄԱԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ Կարեն Նազարյանը պաշտոնական նամակ է հղել նույն կառույցի գլխավոր քարտուղար Պան Գի Մունին, ինչպես նաեւ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային եւ անվտանգության խորհրդին: Նամակում Նազարյանը շեշտում է, որ Ադրբեջանը շարունակում է ապատեղեկացնել միջազգային հանրությանը՝ սուտ լուրեր տարածելով. «Ադրբեջանն իրեն պահում է «զոհի» պես, իբր թե ենթարկվել է հայկական ագրեսիայի, սակայն նրանք թաքցնում են այդ տարիների հենց ադրբեջանական վկայությունները», ասված է նամակում: Կարեն Նազարյանը որպես ապացույց բերում է Ադրբեջանի այդ ժամանակվա նախագահ Այազ Մութալիբովի հարցազրույցը, որտեղ, խոսելով Խոջալուի մասին, Մութալիբովը նկարագրում է, թե ինչպես Ադրբեջանի ընդդիմությունն ու ոստիկանությունն ընդդիմանում էին խաղաղ բնակչության տեղահանմանը՝ լեռնային շրջաններով: Դրանով ընդդիմությունը ցանկանում էր սեփական ժողովրդի միջեւ «պատերազմ գցելով» հասնել իշխանության: Նազարյանը նամակում անդրադարձել է նաեւ 1992-ի սեպտեմբերին հրապարակված The Helsinki Watch կազմակերպության զեկույցին, որտեղ, հենվելով հենց ադրբեջանցի ականատեսների վկայությունների վրա, ասվում էր, որ ոստիկանությունն ինքն է կրակ բացել փրկվել ցանկացող քաղաքացիների վրա: «Մինչդեռ միջազգային հանրությունը մեկ անգամ չէ, որ համոզվել է, թե ինչպես են հայերը Ադրբեջանում ենթարկվել ջարդերի: Ղարաբաղի ժողովրդի խաղաղ եւ արդարացի պահանջին, որ ինքն ուզում է վերականգնել սեփական ինքնորոշման իրավունքը, Ադրբեջանի իշխանությունները պատասխանեցին Սումգայիթում եւ Բաքվում հայերի ջարդ կազմակերպելով: Սրանք նախկին սովետական երկրում առաջին դեպքերն էին՝ մասսայական սպանությունների: Ուստի, բնականաբար, Սովետական Ադրբեջանում դատական գործեր բացվեցին այդ հանցագործների նկատմամբ, սակայն երբ Ադրբեջանը հռչակվեց անկախ պետություն, բոլոր այդ մարդասպանները հռչակվեցին ազգային հերոսներ: Միեւնույն ժամանակ, միջազգային որոշ կազմակերպությունների զեկույցներն ապացուցում են, որ հայերի ջարդեր իրականացվել են նաեւ Ադրբեջանի այլ շրջաններում: Մասնավորապես Գանձակի շրջանում 1988-91-ին կազմակերպվել են էլ ավելի վայրագ սպանություններ, որոնք բերեցին այդ շրջանների լրիվ հայաթափմանը՝ բռնի արտաքսելով ու կոտորելով շուրջ կես միլիոն հայերի: Այս բոլոր վայրագություններից հետո Ադրբեջանը հարձակվում է Ղարաբաղի վրա: Եվ հիմա պետք է մեկընդմիշտ պարզ լինի. Ադրբեջանն ինքն է սկսել ագրեսիան Ղարաբաղի նկատմամբ: Իսկ հայերս վստահ ենք, որ այս ստեղծված իրավիճակից ելքի միակ ճանապարհն այն է, որ վերահաստատվի Ղարաբաղի ժողովրդի օրինական պահանջը՝ հիմնված ազգերի ինքնորոշման իրավունքի վրա», եզրափակել է իր նամակը ՄԱԿ-ում մեր երկրի ներկայացուցիչը: Հ. Ա.**

# Պետք չէ ակնկալել Կոնգրեսից ցեղասպանության բանաձեւի ընդունումը

*Ըստ Ռիչարդ Կիրակոսյանի*

Ռազմավարական հետազոտությունների հայկական կենտրոնի տնօրեն **Ռիչարդ Կիրակոսյանի** մեկնաբանմամբ՝ ԱՄՆ-ում այսօր քննարկվող ցեղասպանության թեման ամենեւին էլ չի փոխվել: Սրա պատճառը, ըստ Կիրակոսյանի, Թուրքիան է, որի գործոնն է հենց առաջնայինը բանաձեւի «առաջացման» համար, ոչ թե հայկականը: «Հետեւաբար ես չեմ կարծում, որ Կոնգրեսն այս տարի կընդունի այդ բանաձեւը: Ինձ համար կարեւոր էլ չէ՝ կընդունեն ԱՄՆ-ը կամ Ֆրանսիան ցեղասպանությունը, թե ոչ, ավելի կարեւոր է, որ Թուրքիան ընդունի, իսկ այս առումով Թուրքիան շատ դանդաղ է փոխվում», նկատեց Կիրակոսյանը:

Իսկ որ արտաքին ուժերը ճնշում են կիրառում Անկարայի վրա, ըստ Կիրակոսյանի, չի կարելի միանշանակ լավ ընդունել, քանի որ. «Թուրքիան լավ չի արձագանքում այդ ճնշումներին: Եթե դրանք շարունակվեն, ապա Անկարան կարող է սխալ ուղղությամբ գնալ, նրանք կարող են զայրանալ եւ ավելի համառ դառնալ: Այսօր պետք է նկատել, որ այդ երկրի ներքին իրավիճակը լուրջ փոփոխությունների է ենթարկվում, նրանք քաղաքական կուրսի, ուղղության ընտրության առջեւ են կանգնած, եւ այս առումով մենք չենք կարող իմանալ, թե ինչպիսի՞ն կդառնա Թուրքիան որոշ ժամանակ անց: Նա կարող է ավելի վտանգավոր հարեւան դառնալ», եզրափակեց Ռիչարդ Կիրակոսյանը: Հ. Ա.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

# Անցուդարձ

Հանրային խորհրդի ամբողջական ձեւավորումից հետո ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հետ երկրորդ հանդիպման քննարկման թեմաները երկուսն էին՝ գյուղատնտեսության ոլորտում կոոպերացիայի զարգացման անհրաժեշտություն եւ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման գործում խնդիրներն ու առաջարկելիք լուծումները:

Հանրային խորհրդի նախագահ **Վազգեն Մանուկյանը** նկատեց, որ գյուղացին կանգնած է մեծ խնդրի առջեւ, թեեւ արտադրանքը չի հասնում մեծ ծավալների, այնուամենայնիվ սպառման խնդիրներ կան: «Գյուղատնտեսությունը պետք է լինի արդյունավետ, եւ գյուղացին չլքի գյուղը: Սա կարեւոր հարց է, որ պետք է քննարկվի ու լուծում ստանա»:

«Գյուղ պահելու համար հարկավոր է վերացնել այն տարբերությունները, որ կա գյուղի եւ քաղաքի միջեւ», նկատել տվեց նախագահը՝ առաջ քաշելով ու կարեւորելով տարածքների համաչափ զարգացման ծրագիրը:

## Ստեղծում են համաշխարհային ստանդարտներին համապատասխան արտադրանք, սակայն արտահանել չեն կարողանում

Չնայած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառած տնտեսության անկմանը, տեղեկատվական ոլորտում գրանցվել է երկնիշ տնտեսական աճ՝ մոտ 17 տոկոս: Սրանք «Սինոփսիս Հայաստան» ընկերության նախագահ **Հովիկ Մուսայելյանի** ներկայացրած տվյալներն են:

Խոսելով ինտերնետի սակագների ու որակի մասին՝ Մուսայելյանը փաստեց, որ դրանք չեն նպաստում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանն ու բնակչության համար ինտերնետի մատչելիության ընդլայնմանը:

# Գյուղը պահպանելով զարգացնել գյուղատնտեսություն




**Խոսրով Հարությունյանը** փաստեց, որ մասնատված, հյուծված, ջլատված գյուղացիական տնտեսությունը չի կարող դառնալ դինամիկ զարգացող գյուղատնտեսության հիմք: «Պետք է պայմաններ ստեղծել, որ այդ գյուղացիները միավորվեն իրենց հետաքրքրությունների շուրջը: Երբ ասում են՝ կոոպերացիա, դա չի նշանակում կոլխոզացում»: Նա նկատեց, որ գյուղացին միայնակ է մնացել, ունի իր ապրանքն իրացնելու խնդիր. նրանից ապրանքն էժան գնում են ու կրկնակի թանկ վերավաճառում: «Թեեւ շուկայում ապրանքների գները բարձրանում են, սակայն գյուղացին դրանից որեւէ օգուտ չի ստանում: Գյուղացին գյուղատնտեսությամբ շահագրգռված չէ», նկատեց նա՝ միաժամանակ բարձրաձայնելով գյուղատնտեսական տեխնիկայի անմխիթար վիճակի հարցը:

Նախագահն էլ ասաց, որ գյուղացուն կարելի է աջակցել՝ Հայաստան բերելով ժամանակակից տեխնիկական միջոցներ ու տեխնոլոգիաներ:

Հարությունյանը համոզված է, որ գյուղատնտեսական քաղաքականության մեջ կտրուկ փոփոխություն իրականացնելու համար պետք է առաջնահերթ փոփոխել գիտակցությունը:

«Կոոպերացիաների գաղափարը լավն է, սակայն չպետք է դիտել որպես «անմահական խնձոր», նկատեց նախագահ Սարգսյանը:

«Գաղափարը կարեւոր է, բայց չգերագնահատենք», առաջարկեց **Վլադիմիր Մովսիսյանը**: «Կան խնդիրներ, որոնք պետք է լուծվեն: Ձեռնարկած միջոցառումների անարդյունավետության պատճառը գյուղատնտեսության ենթակառուցվածքների անկատարությունն է: Օրինակ, ոռոգման համակարգը կայացած է, սակայն մատչելի չէ: Տարբեր պատճառներով 70.000 հա չի ոռոգվում: Շուկայական համակարգը կիսակայացած է, իսկ ապահովագրությունը կամ արտադրական սպասարկումն ընդհանրապես կայացած չեն»:

Գյուղատնտեսության նախարար **Գերասիմ Ալավերդյանը** կոոպերացիաների ստեղծումը համարեց գյուղատնտեսության զարգացման ուղիներից մեկը: Ըստ նրա, կոոպերացիաների միջոցով գյուղացիները կարող են միասնական ուժերով վարուցանք անել, ավելի էժան գներով ձեռք բերել պարարտանյութ:

«Հայաստանում կան առաջատար ընկերություններ, որոնք ռեգիոնալ առումով բարձրարժեք արտադրանք են ներկայացնում: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտով զբաղվող ընկերություններն իրենց արտադրանքը արտահանում են ինտերնետի միջոցով: Ինտերնետի որակը ցածր է, նորմալ չենք կարողանում արտահանել մեր արտադրանքը»:

Այդ կապակցությամբ նա առաջարկում է մշակել ինտերնետի որակի, արագության տատանումների եւ հասանելիության ծառայությունների չափանիշներ՝ խախտման դեպքում սահմանել որոշակի տույժ եւ տուգանք:

Հանրային խորհուրդն այդ առնչությամբ փաստաթուղթ է կազմել, որի վրա աշխատել են ոլորտի լավագույն մասնագետները, սակայն փաստաթուղթը Հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովի հավանությանը (ՀԾԿՀ) չի արժանացել: Մուսայելյանը նախագահ Սարգսյանին առաջարկեց աշխատանքային խումբ ստեղծելու ցուցում տալ, որտեղ կընդգրկվեն ոչ միայն ՀԽ անդամները, այլեւ ՀԾԿՀ-ն, էկոնոմիկայի, տրանսպորտի եւ կապի նախարարությունների ներկայացուցիչներ: Այն ժամանակ առ ժամանակ նախագահին կներկայացնի զեկույց ոլորտի զարգացման խոչընդոտների վերաբերյալ:

«Իսկ ի՞նչն է պատճառը, որ ինտերնետի որակը ցածր է»՝ նախագահի հարցին Մուսայելյանը պատասխանեց, որ իրենց էլ հարյուր տոկոսով հարցի պատասխանը հայտնի չէ: «Մանրածախ պրովայդերներն ասում են, որ մեծածախ պրովայդերներն արդեն դրսից վատորակ ինտերնետ են գնում, իսկ մեծածախներն ասում են, որ իրենք որակով ինտերնետ են տալիս մանրածախ պրովայդերներին»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԽՈՒՍԱՆԱՎՈՒՄՆԵՐ

# «Թուրքիայի համար լավագույն տարբերակը Արձանագրությունների վերապահումներով վավերացումն է»

1-ին էջից

**«Թուրքիան ակնկալում էր, որ շնորհիվ արձանագրությունների կձերբազատվի միջազգային պլատֆորմներում հարուցվող «ցեղասպանության» մեղադրանքներից, միաժամանակ կհաղթահարի հատկապես ԱՄՆ-ի 1915-ի իրադարձություններն իբրեւ «ցեղասպանություն» բնութագրելու սպառնալից ճնշումները: Հայաստանի նպատակը սահմանների բացման շնորհիվ տնտեսությունը կարգավորելն էր, ինչպես նաեւ Ղարաբաղի հարցում Ադրբեջանին միայնակ թողնելը: Արձանագրություններին ամենաբուռն հակազդեցությունը ցույց տվեց հայկական սփյուռքը: Դրա հիման վրա Հայաստանի Սահմանադրական դատարանն ամենաարմատական մեկնաբանությամբ կարծես վերաձեւակերպեց արձանագրությունները ու ի չիք դարձրեց Թուրքիայի ակնկալիքները:**

**Թեեւ Թուրքիայի արտգործնախարարությունը, ճիշտ գնահատելով այդ որոշումը, պաշտոնապես հայտարարեց, որ հակասում է արձանագրությունների տառին եւ ոգուն, սակայն ոչ մի պետություն չպաշտպանեց թուրքական կողմի առարկումը: Թերեւս պատահական չէր, որ փետրվարի 19-ի համարում «Էկոնոմիստ» հանդեսը ստեղծված իրավիճակը գնահատեց Թուրքիան «մեկուսացավ» ձեւակերպմամբ: Թուրքիայի առարկումներին ուշադրություն չդարձրին նաեւ ԱՄՆ-ը եւ միջնորդ Շվեյցարիան, արմատավորվեց այն տեսակետը, թե Թուրքիան Հայաստանի Սահմանադրական դատարանի որոշման «պատրվակով» փորձում է «խցանել» նորմալացման գործընթացը:**

**Այս արձանագրությունները, որոնք թուրքական կառավարությունը իբրեւ մեծ հաջողություն էր ներկայացրել, լուրջ վնաս են հասցնում Թուրքիայի հեղինակությանը: Ավելին, այս արձանագրությունները մեծ հարված են հասցրել թուրք-ադրբեջանական բարեկամությանն ու սասանել են Թուրքիայի հանդեպ Ադրբեջանի վստահությունը: Թուրքիան և՛ Ադրբեջանում և՛ երրորդ երկրներում ընկալվում է որպես «կանոնները խախտող» երկիր եւ անկյուն է խցկվել Երեւանի առջեւ: Ցավոք, նորանկախ Հայաստանի դեմ պետականության հազար տարվա ավանդույթ ունեցող Թուրքիան հայտնվել է ծանր վիճակում:**

**Հակաթուրքական լոբբիներին նոր առիթներ չտալու եւ դրսում «կանոնները խախտողի» իմիջից ձերբազատվելու համար Թուրքիան երեք ընտրություն ունի. 1) Որպես Հայաստանի Սահմանադրական դատարանի որոշումը հակադարձելու դրսեւորում, արձանագրությունները չմտցնել Մեջլիսի օրակարգ, 2) արձանագրությունները մտցնել Մեջլիսի օրակարգ, պայմանով, որ Մեջլիսը, ելնելով Հայաստանի Սահմանադրական որոշումից եւ Ղարաբաղի հիմնահարցում առաջընթացի բացակայությունից, մերժի դրանք, 3) կամ էլ ներկայացնել Մեջլիս եւ հաստատել վերապահումներով, ինչպես Հայաստանի Սահմանադրական դատարանը:**

**Այս երեք տարբերակի առավելությունների եւ թերությունների հանրագումարը ցույց է տալիս, որ ամենահեռատեսականը երրորդ տարբերակն է, այսինքն՝ արձանագրություններն ընդգրկել Մեջլիսի օրակարգում եւ վավերացնել վերապահումներով: Հենց դա է ճիշտը: Թուրքիան վերապահումներով պետք է հակազդի Հայաստանի Սահմանադրական դատարանի որոշմանը եւ առաջարկի հետեւյալ նախապայմանները. 1) Հայաստանը պաշտոնապես պետք է ճանաչի ինչպես Մոսկվայի, այնպես էլ Կարսի պայմանագրերը եւ հայտարարի, որ ճանաչում է Թուրքիայի հետ սահմանը, 2) պատմության հանձնաժողովը արխիվային փաստաթղթերի լույսի տակ պետք է ուսումնասիրի 1915-ից առաջ եւ հետո հայ ազգայնականների ապստամբություններն ու օսմանյան պետության հակազդեցությունը դրանց եւ գնահատական տա իրադարձություններին: Հայաստանը պետք է հրաժարվի երրորդ երկրներում հակաթուրքական գործունեության (ցեղասպանության առնչությամբ) ծավալումից, 3) առանց Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման սահմանները չպետք է բացվեն:**

**Կարծում եմ, արձանագրությունների վավերացումը այս երեք նախապայմաններով ավելի նախընտրելի է, քան մերժումը, որովհետեւ միջազգային ասպարեզում կուժեղացնի Թուրքիայի դիրքերը: Թերեւս ամենավատ տարբերակը արձանագրությունները խորհրդարան չներկայացնելն է: Վատ է նաեւ Մեջլիսում մերժելու տարբերակը: Թուրքիան այս արձանագրությունները չպետք է դարձնի ներքին հաշվարկների զոհը, այլապես դա նրա համար կարող է աղետի վերածվել»:**

# Ո՞րն է ամենաշահութաբեր «բիզնեսը» Հայաստանում

1-ին էջից

Ամեն մի գործարք վավերացնելու համար սահմանված են որոշակի պետական տուրք եւ ծառայության վճար: Նոտարական գրասենյակներում գրված եւ պատերին փակցված է, թե ո՞ր ծառայության համար ի՞նչ պետտուրք եւ որքա՞ն ծառայության վճար պետք է վճարվի: Օրինակ՝ անշարժ գույքի վարձակալության համար սահմանված է բազային տուրքի հնգապատիկի չափով պետական տուրք: Նշված է նաեւ, որ բազային տուրքի չափը 1000 դրամ է: Քիչ թե շատ գրագետ քաղաքացիները կհասկանան, որ խոսքը 5000 դրամ արժողությամբ գործարքի մասին է, որին պետք է ավելանա նոտարական ծառայության վճարը, որը առավելագույնը կարող է նույնքան լինել: Այսինքն, համաձայն օրենքի, քաղաքացին պետք է վճարի շուրջ 10 հազար դրամ եւ ստանա նոտարական վավերացումը: Սակայն օրենքի տեսական դրույթներից օգտվելու ցանկություն ունեցողին գործնականում հակադրվում է դաժան իրականությունը:

Նոտարական որեւէ վավերացում չի կատարվում 20 հազար դրամից ցածր գումարով: Ավելի ճիշտ՝ 20-30 հազար դրամ, ինչը միայն նոտարին վճարվող գումարն է կազմում: Ընդ որում, երբ փորձ արեցինք նոտարի մոտ վկայակոչել, որ իր ընդունարանում փակցված իրազեկման մեջ նշված է 5 հազար դրամ պետական տուրքի չափը, ստացանք «Իմ ծառայության գինը սա է» պատասխանը: Մոտավորապես՝ «Սա իմ հոր բոստանն է, ինչ կուզեմ, կանեմ»: Միաժամանակ, նշենք, որ նոտարին վճարվող գումարի մեջ չի մտնում նոտարի ընդունարանի աշխատակցուհուն վճարվող գումարը՝ 2500-3000 դրամ (կախված տվյալ նոտարի մոտ աշխատողի «բարեհոգությունից») մեկ-երկու տպագիր էջի համակարգչային շարվածքի համար: Երբ 1 էջի համակարգչային շարվածքի շուկայական գինը 200 դրամ է: Իսկ նոտարին վճարվող ծառայության համար, պարզվում է, պայմանագրի՝ համակարգչով հավաքելը, ավելի շուտ՝ օրինակելի ձեւի վրա միայն մարդկանց կամ կազմակերպությունների անուններ փոխելը, չի մտնում…

Կանխելու համար պետական պատասխանատուների հերթապահ՝ «այլ նոտարի դիմեք» խորհուրդը, տեղեկացնենք, որ օրենքով նախատեսված պետտուրքի չափով գործարքը վավերացնելու համար դիմեցինք եւս մի քանի նոտարների: Նրանց առաջարկած «ծառայությունների» արժեքը նույնն էր: Դարձյալ որեւէ հիշեցում օրենքով սահմանված պետական տուրքի եւ ծառայության վճարի մասին ոչ մեկին չէր հետաքրքրում: Նրանց թելադրած գինը 20 (25, 28, 30) հազար դրամն էր, չհաշված համակարգչային շարվածքի 2500-3000 դրամը:

Ստիպված 20 հազար դրամով գործարքը վավերացրինք՝ գումարը թողնելով նոտարի գրասեղանի աջ դարակում եւ 2500 դրամ վճարելով պայմանագրի համակարգչային շարվածքի համար: Բնականաբար, բանկի միջոցով վճարման կամ կտրոնի տրամադրման մասին խոսելն անգամ ավելորդ էր, քանի որ փոքր-ինչ բարի գտնված եւ նվազագույն գին առաջարկած առեւտրականը, այսինքն՝ նոտարը, կարող էր զայրանալ եւ բարձրացնել գինը:

Ավելացնենք, որ նոտարական գրասենյակները մշտապես լի են հաճախորդներով, եւ յուրաքանչյուր 10-15 րոպեն մեկ հերթական գործարքն է վավերացվում: Այսինքն, ամենահամեստ հաշվարկներով, ամենահամեստ նոտարը յուրաքանչյուր գործարքից «իր հալալ քրտինքով» գրպանում է նվազագույնը 15 հազար դրամ, ինչը մեկ ժամում կազմում է 60 հազար դրամ, իսկ 8-ժամյա աշխատանքային օրվա ընթացքում՝ 480 հազար դրամ, հանած որպես պետական տուրք վճարվող գումարը: Մեկ օրում 480 հազար դրամ, մեկ ամսում (20 աշխատանքային օրերի ընթացքում)՝ 9 մլն 600 հազար դրամ կամ ավելի քան 25 հազար դոլար: Դե հիմա թող որեւէ մեկը պնդի, թե Հայաստանում կա ավելի շահութաբեր, արագ շրջանառություն ունեցող եւ առանց ռիսկերի բիզնես: Ու մինչ Հայաստանի կառավարությունը մտածում է, թե ինչպես անի, որ Հայաստանը դառնա «բիզնես գերազանցության կենտրոն», նոտարներն արդեն ճանապարհը գտել են եւ իրենց վաղուց դարձրել «բիզնես գերազանցության կենտրոն», ինչպիսին չկա ամբողջ աշխարհում:

AZG NEW PDF.qxd 1/1/2002 2:42 AM Page 1





ՊԱՐՈՒՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# ՍԱՐԱՀԱՐԹԻ ՁՈՀԵՐԸ

*Սկիզբը՝ փետրվարի 18-ի համարում*

Նզովքին կսկիծը փոխարինեց, մեղավորության համատարած զգացումը: Նույն աղջիկները, որ անճանաչելիորեն ենթարկված կատաղության մոլուցքին՝ մասնակցել էին կույր, հրեշավոր դատաստանին, իսկ հաջորդ օրերին սարսափում էին ձորին մոտենալուց, հենց շրջակայքից քաղած մանրիկ ծաղիկներով էին ծածկում շիրիմ դարձած կույտը:

Այդ աղջիկներից մեկը հասուն տարիքում գժանոց ընկավ, մյուսի դեմքից թույն էր կաթում...

Որեւէ մեկը պատասխանատվության չենթարկվեց: Գյուղացիները ցավում էին աղջկա խորտակված կյանքի, անմեղ զոհի համար, ծնծնացնում էին ու գլուխները տմբտմբացնում, սակայն օրեր անց արդեն բարձրաձայն խոսակցություն չէր հնչում այդ թեմայով: Մեզ ընդհանրապես արգելված էր դեպքի մասին խոսելը: Երեւանից հատուկ մասնագետներ էին գալիս, զրույցներ անցկացնում, հանդիպումներ ու էքսկուրսիաներ էին կազմակերպում: Ուսուցիչները շատ ուշադիր ու հոգատար էին դարձել, հատկապես աղջիկների նկատմամբ:

Բռնաբարություն կոչվածն ինքնին ահավոր էր, ինչքան որ գիտեի ու պատկերացնում էի: Ֆիլմ էինք տեսել՝ այդ ժամանակվա համար բացառիկ կադրով: Գերմանացի զինվորը բռնաբարում էր պարտիզան աղջկան: Ընկերներս հաճույքով էին նկարագրում կարճ պահը. գերմանացին տապալում էր աղջկան եւ քաշում, բացում էր նրա կուրծքը, ապա ցորենի արտն էին ցույց տալիս, աղջկա ճիչերն էին լսվում, հետո ինքնագոհ զինվորը հեռանում էր, աղջիկն ընկած էր մնում՝ ոտքերն ու կուրծքը բաց... Նշանակություն չուներ նույնիսկ, որ պատերազմ էր, թշնամի զինվոր. աղջկա մերկությունը, ձայներն էին հիշում ու նկարագրում, թե ինչպես էր ճչում ու տնքում, երբ ճիչը վերածվեց տնքոցի... Պատմում ու քննարկում էին՝ հաճույքով, ոգեւորությամբ, ձայնարկություններով... Իսկ ես ցավագին էի ընդունում ու դրանից հետո կինո չէի գնում: Ինձ տառապանք էր պատճառում նաեւ ընթերցանությունը, երբ, ասենք, հայ աղջիկը հայտնվում էր պարսիկի կամ թուրքի հարեմում...

Եղբայրները թշնամիներ չէին, սակայն նույնկերպ նրանց էի ատում: Հավանաբար աղջիկներն էլ էին ատում նրանց... կամ զզվում եւ վախենում: Անգամ մեզնից էին խուսափում՝ բոլոր տղաներից: Հենց մեր դասարանում զգում էի սառնության, անվստահության ու զգուշավորության պատը եւ, ամենացավագինը, վախը, որ թափվում էր դեռահասական աշխուժությունից զրկված աղջիկների վրայից, դողահար, սառած ու կաշկանդված, նախկին անմիջական շփումներից իսպառ հրաժարված...

Դեռ վերջը չէր:

Եղբայրներին չէին սիրում, նրանց ընտանիքն էլ հեռացավ գյուղից, մի քանի ամիս հետո: Գյուղը չներեց նրանց, մեկուսացրեց ու արտամղեց, բայց եւ չպատժեց, նույնիսկ... չթողեց, որ պատիժ կրեն, կոծկեց իրականությունը, եւ բոլորը հավատացին, հավատալու տվեցին:

Մեղավորների ընտանիքը, բարեկամներն ազդեցին. գյուղի ուժեղ ու բազմանդամ ցեղերից էին: Գյուղացիներն իրենք էին լուռ ընդունում, որ եղածը եղած է, մեռածին հետ չես բերի, մենակ, անտեր մարդ էր, մի լացող չուներ, «էս ջահելներն էլ չգնան կորչեն»:

Սարի պահակը երկրորդ անգամ սպանվեց դաժանորեն: Նա իր առաջին մահով չփրկվեց անամոթ անարդարությունից:

Երկու շաբաթ չանցած՝ եղբայրներին մոռացան: Չէին ասում, թե պահակն է արել, այդպիսի ահավոր մեղքի տակ չէին ընկնի, սակայն լռությամբ փաստացի հաստատում էին, որ նա է եղել:

Լռում էր նաեւ միլիցիան, չափազանց շատ փող էր կերել:

Ամռանը ձորում խողովակաշար անցկացրին, վերեւում ջրամբար-բաշխիչ կայան կառուցելու համար տեղ հարթեցին, պահակի գերեզմանակույտը թաղվեց քշված զանգվածի տակ:

Ձորը մեր մշտական խաղավայրերից էր, գյուղի կեսն այստեղով էր սար գնում-գալիս, գառ ու սագ արածեցնող երեխաներն անպակաս էին, ֆուտբոլի դաշտն էր կողքին, գերեզմանոցը, Սրբի քարափը, անընդհատ ոտքի ու աչքի տակ... Ամայացավ դեպքից հետո, քանի դեռ ժամանակը չէր գործել...

Հետո, տարիներ անց, գյուղ գալիս, զարմանքով էի հիշում, որ մենք՝ փոքրուց մինչեւ դպրոցն ավարտելը, ազատ ու անվախ շրջում էինք սարահարթում, որն ընդարձակ գերեզմանոց էր դարձել՝ մեկը մյուսից ողբերգական, սարսափազդու պատմություններով, ժամանակի ընթացքում հայտնի դարձած ու անվանում ստացած վայրերով, եւ ինչքա՜ն մոռացված աճյուններ ու իրողություններ էին ամփոփված սարահարթում ու դարերի խորքերում, արշավանքներ, պատերազմներ, ջարդեր: Ամեն մի քար արյուն ու ոճիր էր տեսել:

Այդուհանդերձ, մռայլ վախի փոխարեն ժամանակի ծանրությունից տափակած սարահարթը բաց ու պարզ, բարի ու անմեղ երեւույթ էր կամ էություն, եւ կարոտը, որ կանչում էր ինձ գյուղ ժամանակ առ ժամանակ, ամենից առաջ հենց ինքն էր՝ սարահարթը, եւ սարի պահակը նրա մասնիկն էր դարձել:

Սկզբում մղձավանջ էր, սարսափ, առավոտյան ինձ պահարանից էին հանում, մահճակալի տակից, օրեր անց նեղ, փակ տեղերից էի վախենում: Երազում ինքնաթափից թափվող հողը ծածկում էր ինձ, վերեւից սահող հողին նայում էի պահակի աչքերով, զգում էի հողի խոնավությունը, որ շարունակում էր թափվել ու թափվել, գուղձերը խփվում էին դեմքիս ու փշրվում՝ վերքերի մրմուռը մեղմացնելով, ապա հողը պարուրում էր ամբողջովին, կարծես թե լավ էր, հանգիստ, հեռու, կտրված՝ չարությունից ու կատաղությունից, քանի դեռ անհուսության սարսափը չէր կորցրել ամեն ինչ... Բղավոցով արթնացնում էի տագնապահար ծնողներիս...

Դասի ժամին էլ էի տեսնում սարի պահակին: Եթե սովորական վիճակ էր, անցած օրերից մեկը, մեզ հետ զրուցելիս, ձիու մոտ նստած, օձաձեւ մտրակը դաստակից օղակով կախած, «Ավրորա» ծխելով հանգիստ ու դանդաղ պատմելիս... լսում էի, պատասխանում նրան, ծիծաղում... Եթե սպանվելու պահն էր լինում, երբ քաշում էին նրան՝ գլուխը քարերին խփելով, ամեն մեկը ջանալով անպայման հարվածել, թքել, քարկոծել, աչքերը հանել, անմասն չմնալ համընդհանուր դատաստանից, խեղդվում էի, քարանում, բնազդորեն ապավինում փրկարար գոռոցին, սարսռեցնող ճչոցին կամ դասարանցիների միջամտությամբ էի ուշքի գալիս...

«Արձակուրդին տարեք գյուղից,- ծնողներիս ասել էր դասղեկը,- շա՜տ զգայուն է,- եւ ավելացրել էր չարացած,- ամբողջ գյուղը պիտի տեղահանվի, մենք այստեղ ապրելու իրավունք չունենք»:

Ինձ հիվանդ կամ գիժ չէին համարում: Շատ դպրոցականներ էին հոգեպես խեղված սարսափելի դեպքից, որը երկրաշարժի հաջորդական ցնցումներով տարուբերում էր մարդկանց միտքը ոճրագործության եւ անարդարության միջեւ: Ծանր ազդեցություն թողեց ձորի դեպքը աշակերտության եւ ամբողջ սերնդի մեջ, ոչ միայն դպրոցում սովորելու տարիներին, այլեւ հետագա կյանքում, ամոթալի ցավը մնաց իմ հոգում:

Ես հանգստանում էի ձորում, զարմանալիորեն, ոճրագործության վայրում: Պահակի գերեզմանից չէի վախենում՝ ի տարբերություն շատերի: Գիշերները նրան տեսնելուց եւ հիշելիս դողը բռնում էր ինձ, ձորում վախը վերանում էր: Իրոք նա սարահարթի մաս էր դարձել:

Նա ինձ չէր տարբերել մյուս երեխաներից, ում հետ խոսքի բռնվել սիրում էր: Ոչ էլ ես էի առանձնահատուկ վերաբերմունք ցուցաբերել իր նկատմամբ: Մշտական մտասանջությունից մոտեցավ, հարազատացավ: Եվ հարազատի պես անբաժան էր ինձնից, մտապատկերներից ու մտածմունքներից, այն ամբողջից, որ կոչվում է ներքին կամ սեփական աշխարհ:

Սեդան հետո միացավ նրան, երբ ուշքի էի գալիս վախճանի տպավորություններից՝ ավելի շատ արդեն իր մասին մտածելով, եւ նույնպես մնաց իմ աշխարհում: Դա սեր չէր, ոչ այդ եւ ոչ էլ հետագա անբաժան տարիներին, եւ չէի կարծում, թե Սեդան դասարանում որեւէ մեկին դուր կգար... Շքեղ բարձրդասարանցիներ էին աչքի ընկնում դպրոցում, մեր դասարանում կային նորածիլ գեղեցկուհիներ, որ ստվերում էին մյուս աղջիկներին, իսկ Սեդան ինքնին աննկատ էր, մանրիկ, Մնդրիկ՝ ընկերուհիների կնքած անունն էր... Դիմագծերը տգեղ չէին, լուրթ աչքերը գեղեցիկ էին, մեծ, սակայն սառած էին, ինքն էլ աշխույժ չէր, մշտապես քնատ, թմրած, «պաղած տոլմա» էինք ասում, պարզ, դյուրահավատ, հեշտությամբ կարելի էր խաբել նրան... Մի մականուն էլ ուներ, միակը, որ լսելիս ժպտում էր՝ Ձնծաղիկ...

Սեդայենց ընտանիքը կորավ անհետ, անլուր: Ոչ ոք չգիտեր նրանց բնակության վայրը: Գյուղացիները չէին խոսում եղածի մասին, չէին քրքրում վերքը, որը նաեւ իրենցն էր:

Երբ գյուղ էի գալիս (եթե Հայաստանում էի լինում), շրջում էի սարահարթում, վերջում իջնում ձոր՝ պահակի գերեզմանի մոտ, կարծես երկուսին էի այցելում, թեեւ Սեդան ողջ էր... հավանաբար:

Ժամանակ անց նույն երեւույթներին ու իրերին ուրիշ կերպ էի նայում՝ ափսոսանքի ու կորստյան զգացումով: Ցավալիորեն դա վերաբերում էր նաեւ մանկական աշխարհին՝ հափշտակությամբ ընթերցած գրքերին, նրբությունն ու փայլը կորցրած դասընկերուհիներիս, սարերին... ընդամենը քսան տարի առաջ բարձր ու հպարտ, հիշում էի ծնկներիս լարվածությունն ու քամու վնգոցը դահուկներով իջնելիս, իսկ հիմա ցածրիկ էին, խեղճ, սմքած, քարածածկ ինչ-որ թեքություն:

Օղաչուի փառքը երբեք չխամրեց: Միշտ հիշվում էր սրբազան ակնածանքով եւ հիշեցնում, որ անձնազոհությունը հեքիաթ կամ հիմարություն չէ:

Օղաչուի բլուրը եւ Մոր սուրբը սարահարթի ամենահիշարժան վայրերն էին, հաստատուն սրբություն: Ոչ մի տեղացի նրանց մասին խոսելու եւ անծանոթներին պատմելու առիթը բաց չէր թողնի: Իսկ սարի պահակին մոռացան, չէին ուզում հիշել, բոլորի բերանը փակել էր ընդհանուր մեղքը, որ ինձ էլ էր լավ ծանոթ: Հետո իմն արդեն ընդհանուր մեղք չէր, առավել եւս՝ լոկ չնչին մաս: Անողոք ինքնամեղադրանքը ջնջեց արդարացումներն ու պատճառաբանությունները, թե տասներեքամյա տղան ի՞նչ կարող էր անել գազազած ամբոխի ու մոլեգնած մոր ցասումի դեմ, կամ՝ պահակը թեեւ չէր գործել հանցանքը, բայց իր հոգում եւ ներքին ցանկություններում զերծ չէր այդ արարքից, այնքան վատ բաներ էին խոսում եւ վերագրում նրան: Ես մեղավոր էի, որ չէի պաշտպանել եւ չէի փրկել սարի պահակին, եւ մեղավոր էի, որ չէի պաշտպանել Սեդային: Սեփական մեղքի գիտակցումից ազատում չկա, եթե ինչ-որ ժամանակ, հոգեկան զբաղմունքի կամ սովորության պես, չես սկսում սիրել այդ մեղքը, որ գուցե նոր ոճիրներ կամ այլ՝ սեփական անվանումով արարքներ է նախանշում...

Չհամարձակվեցի եւ չկարողացա պաշտպանել սարի պահակին, հետո մտածում էի ինչ-որ ձեւով արձանագրել, հաստատել նրա անմեղությունը, դարձյալ չհամարձակվեցի, կամ միշտ հետաձգում էի:

Անողը հայտնվեց:

Զարմանալի կամ ճակատագրական պատահականությամբ՝ գյուղում էի եւ բարձրացել էի Հայրենական պատերազմում զոհվածների նոր կառուցված հուշարձանը դիտելու, որը դպրոցից քիչ էր հեռու: Օղաչուի հուշարձանն անկատար ցանկություն մնաց, գյուղացիները նախընտրեցին իրենց հավաքած եւ կոլտնտեսության փողով պատերազմի մասնակիցների հիշատակը հավերժացնել: Օղաչուի անունն էլ էին գրել քարին, ցուցակից առանձին, հավելյալ գրությամբ, եւ ցուցանակ էին դրել նրա բլրին:

Սարի պահակի գերեզմանատեղի մեծ քարերի մեջ մարդ էր երեւում, իջա ձոր:

Տարեց մեկը փորագրում էր համեմատաբար ուղիղ եզրերով ժայռաքարի վրա, որի կողքերի հողը քարերից մաքրված էր եւ թմբի պես հավաքված:

- Դու էս գյուղի՞ց ես,- հարցրեց փորագրիչը, ըստ երեւույթին զրուցակցի կարիք ուներ,- ուրեմն էստեղ մա՞րդ է թաղված... Ես ձեր գերեզմանոցում գրել եմ, բայց չէի լսել... Այ մարդ, ինչ զարհուրելի բան... Խեղճ, դժբախտ մարդ... դժբախտ, դժբախտ, էդքան է՜լ դժբախտ...

Առաջին երեք տառերն էր գծագրել՝ ՍԱՐ...

- «Սարի պահա՞կ» կգրես,- կարծում էի, թե կռահել եմ:

- Չէ, ի՞նչ «սարի պահակ», ազգանունն է՝ Սարգսյան... Առ, կարդա:

Փորագրիչը գետնին դրված ծխախոտի տուփի տակից հանեց ծալված թուղթը: Աշակերտական տետրի քառակուսի թերթիկի վրա մեծատառերով գրված էր.

ՍԱՐԳՍՅԱՆ
ԵՐԵՄ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ
1913-1965

- Ո՞վ է գրել տալիս:

- Աղջիկ է, կնիկ է՝ չհասկացա,- փորագրիչը մյուս ծունկը դրեց բարձիկին,- շեկ մազերով, ակնոցով, մեր գերեզմանոցն էր եկել, անունս իմացել էր, շատ խնդրեց, որ գամ, գրեմ...

Քարի մեծ ճակատի ներքեւի մասում էր փորագրում:

- Վերեւն ուրիշ բան պիտի գրվի, հլը չի որոշել:

Ֆուտբոլի դաշտի եւ գերեզմանոցի արանքի նախկին հեղեղատով, Սրբի քարափի դիմաց, սպիտակ «Նիվա» էր գալիս դանդաղորեն: Ջրամբարը կառուցելու ժամանակ բեռնատարներն այնքան էին անցել, որ քարերը սեղմվել էին գետնի մեջ՝ ճանապարհ գծելով, որը սարալանջն ուռեցրած պահակի գերեզմանասապատը շրջանցելով՝ ձգվում էր մինչեւ գագաթ:

Աշնան կեսի վերջին տաք օրերից էր, որ քրտնեցրել էր լեռնականցի արհեստավորին, հազվադեպ անքամի եւ արեւոտ: Երեւանում արեւն աշնանային փափկությամբ էր շոյում, գյուղում, այն էլ սարում, դեռ վառում էր, թեեւ երեկոներն այստեղ նույնիսկ ամռանն էին ցուրտ լինում:

Իջավ մեքենայից աղջիկը կամ կինը, փաթեթներ ու շշեր հանեց, եկավ մի քանի քայլը, բարակ, շիտակ, բաց գորշավուն տաբատով, նմանագույն կիսավերարկուի բարձրացրած օձիքը մազերի հետ քսվում էր այտին, մուգ ակնոցն ինձ ուղղած: Հենց առաջին հայացքից՝ փակ տեսք էր, անհաղորդ եւ անտարբերաչիչ, շեկ մազերի, բացգույն զգեստների եւ կարծես անգույն դեմքի, ճակատին ու քունքերին կպած մեծադիր ակնոցի եւ բարակ, սեղմված շուրթերի անթափանց շղարշի մեջ: Նույն դեմքը մի փոքր լուսախաղով եւ ժպիտով միանգամայն այլ տպավորություն կթողներ: Եվ ինչպես գյումրեցի արհեստավորը, ես էլ չկարողացա որոշել նրա տարիքը: Համենայն դեպս, քսան տարեկան չէր, ոչ էլ հիսուն:

*Շարունակությունը՝ մարտի 4-ին*

# Միավորելու մի կառույց ստեղծելու առաջարկ սփյուռքահայությանը

Հայերն ազգային միասնականությանը խորապես հավատում են: Այդ միտքը միշտ հետապնդել է նրանց: Սակայն, հակառակ միասնականությանը միտված բազում խոսակցություններին, բոցավառ ոտանավորներին ու հայրենասիրական երգերին, այդ ամենափայփայված ցանկությունը երազ է մնացել մեզ համար: Միասնականության ձախողված փորձերի օրինակները շատ են: Նույնիսկ վտանգի ժամերին հայերը տարակարծիք են եղել եւ հակոտնյա ճամբարների են բաժանվել:

Այդուհանդերձ, վերջին տարիներին մեծացել է այն հայերի թիվը, ովքեր գիտակցում են միասնականության դերի կարեւորությունը ազգային վերապրումի գործում եւ կարծես թե նրանց հաջողվել է համեստ քայլեր ձեռնարկել կոալիցիա ստեղծելու ոլորտում: Ինչպես «Հայաստան» համահայկական հիմնադրամը, այնպես էլ Ամերիկայում գործող Հայկական միացյալ հիմնադրամը բաղկացած են Հայաստանում եւ Արցախում մարդասիրական ծրագրերով զբաղվող համայնքային գլխավոր կազմակերպությունների կոալիցիայից:

Ճակատագրի հեգնանքով, սակայն, ինչքան միասնականության կողմնակիցներն են ավելացել, նույնքան էլ ավելացել են այդ միասնականությանը հասնելու գործնական ծրագրերը, առաջացնելով նոր բաժանումների հնարավորություններ: Աշխարհի տարբեր մասերում այժմ էլ գոյություն ունեն մի քանի նախաձեռնություններ, որոնք մի կողմից առաջարկում են մեկ ընդհանուր հովանու ներքո միավորել բոլոր հայկական կազմակերպությունները, մյուս կողմից առավել նպատակահարմար են համարում ստեղծել հայ արհեստավարժների, հայրենակցական միությունների եւ արեւմտահայաստանցիների առանձին խմբավորումներ: Վերջին հոդվածներիցս մեկում առաջ քաշած համասփյուռքյան կազմակերպչական մի կառույցի ստեղծման գաղափարը դրական լայն արձագանքներ է առաջացրել: Համաձայն լինելով, որ միավորման վերոնշյալ բոլոր ծրագրերն էլ արժանի են լուրջ վերաբերմունքի, եւ նրանց հեղինակները կարող են ի վերջո ձեռք ձեռքի տալով գործել միասնաբար, այստեղ ցանկանում եմ ներկայացնել մի քանի նախնական գաղափարներ, որոնք երկար տարիների խորհրդածությունների եւ տարբեր երկրների համայնքային առաջնորդների եւ հարգված անձնավորությունների հետ իմ ունեցած լուրջ քննարկումների արդյունքն են:

Իմ առաջարկած ծրագիրը ներառում է ստեղծել մի միասնական կառույց, որը կներկայացնի համայն սփյուռքահայությանը, բացառությամբ Հայաստանի եւ Արցախի Հանրապետություններում ապրող հայերի, որոնք արդեն ունեն իրենց համապատասխան կառավարությունները: Մոտ 7 միլիոն հաշվող սփյուռքահայերը իրավունք են ունենալու ընտրելու մեկ ներկայացուցիչ` որոշակի ընտրատարածքում ապրող յուրաքանչյուր 20 հազար հայի համար: Նախօրոք որոշված որակավորումներին համապատասխանող անձինք իրենք կարող են իրենց թեկնածությունը առաջադրել: Իսկ քվեարկողները պետք է լինեն առնվազն 18 տարեկան, պետք է ունենան հայկական ծագում եւ իրենց ընտրատարածքում հավաստի էլեկտրոնային կամ փոստային հասցե: Այս չափանիշներին համապատասխանող յուրաքանչյուր հայ կարող է մասնակցել ընտրություններին անկախ քաղաքացիությունից եւ կրոնական կամ քաղաքական հակվածությունից: Ընտրությունները կազմակերպվեն «մեկ անձ, մեկ քվե» ժողովրդավարական սկզբունքի հիման վրա:

Հայկական հոծ բնակչություն ունեցող երկրներում, այսպիսով, կընտրվեն մի քանի թեկնածուներ, որոնցից յուրաքանչյուրը կներկայացնի 20 հազար հոգանոց մի խմբավորում: Մինչդեռ փոքր հայկական համայնքներ ունեցող տարածաշրջաններում, որտեղ 20 հազար հայերը կարող են մի քանի երկրներում տեղավորված լինել, մեկ ընտրված թեկնածու կներկայացնի այդ երկրներում ապրողներին: Սկզբնական շրջանում կարող է քվեարկողների թիվը մեծ չլինել, բայց հենց զորանա եւ օրինական դառնա, այս նոր կառույցը կկարողանա գրավել առավել մեծ թվով մասնակիցների: Ընտրությունները կարող են միաժամանակ չանցկացվել ամբողջ սփյուռքում: Նախնական շրջանում կարելի է մեծ տարածաշրջանում անցկացնել դրանք` ստուգելու համար ընտրական ընթացակարգի իրագործման հնարավորությունները: Այս առթիվ ցանկանում եմ ողջունել ֆրանսահայ համայնքի առաջնորդների առաջիկա տարի Ֆրանսիայում ընտրություններ կազմակերպելու որոշումը:

Կարեւոր է նշել, որ միայն հայ համայնքի մեծամասնության ընտրած անձնավորությունը կարող է հավակնել ներկայացնելու այդ շրջանում ապրող հայերին, մինչդեռ մյուս ղեկավարները կարող են ներկայացնել միայն իրենց կազմակերպությունները կամ միությունները: Հետեւապես բոլոր ընտրատարածքներից ընտրված 350 ներկայացուցիչները միայն կարող են պաշտոնապես ներկայացնել սփյուռքահայությանը աշխարհով մեկ:

Համընդհանրական այս կառույցը կունենա մեկ ընտրված նախագահ կամ խոսնակ, հանձնաժողովներ եւ ենթահանձնաժողովներ, որոնք կզբաղվեն լեզվի, մշակույթի, կրոնի, կրթության, արտաքին հարաբերությունների, հայկական փոքրամասնությունների իրավունքի, ցեղասպանության ճանաչման, Հայաստանի եւ Արցախի հետ հարաբերությունների, ֆինանսական եւ Թուրքիայից պահանջներ ներկայացնելու հարցերով:

350 անդամ ներառող այս կառույցը ժամանակ առ ժամանակ հանդիպելով, որոշումներ կընդունի քվեների մեծամասնության հիման վրա: Որոշ վճռական (կրիտիկական) հարցերում որոշումները կարող են ընդունվել երկու երրորդի քվեների հիման վրա: Կառույցի որոշումները կարտահայտեն ողջ սփյուռքահայության եւ ոչ թե որոշակի մի կազմակերպության տեսակետները:

Գոյություն ունեցող կազմակերպությունները կշարունակեն իրենց գործունեությունն առանց այդ կառույցի կողմից հարուցված խոչընդոտների կամ մրցակցության: Իրականում համայնքային այդ կազմակերպությունները կարող են բազմապատկել իրենց գործունեությունը եւ քարոզչությունը, որպեսզի այդ միասնական կառույցն ընդունի իրենց ներկայացրած համապատասխան օրակարգային հարցերը: Քանի որ ներկայիս առաջնորդները համայնքներում արդեն ճանաչված անձնավորություններ են, զարմանալի չի լինի, որ հենց նրանք էլ ընտրվեն այդ նոր կառույցի անդամներ:

Համազգային այս կառույցի առավելություններից մեկն այն կարող է լինել, որ ՄԱԿ-ը կամ տարածաշրջանային կամ միջազգային այլ կազմակերպություններ հնարավոր է, որ ճանաչեն նորաստեղծ մարմինը որպես NGO` ոչ կառավարական մի կազմակերպություն, որին իրավունք է վերապահված ներկայացնելու սփյուռքահայությանը եւ խոսելու նրա անունից:

Կառույցի ներկայացուցիչները որոշակի երկրում կամ քաղաքում հնարավորություն կունենան համագործակցելու տեղական իշխանությունների հետ այդ շրջանի հայերի անունից: Օրինակ, ամերիկահայերի միջեւ վերջերս ծագած վիճաբանությունը, թե ո՞վ կամ ո՞ր խմբակցությունը պետք է համայնքը ներկայացնի պետքարտուղար Հիլարի Քլինթոնի հետ հանդիպման ժամանակ, կարող էր տեղի չունենալ, եթե համահայկական կառույցն արդեն գոյություն ունենար: Բացի այդ, Հայաստանի կառավարության պաշտոնյաները կամ արտասահմանցի ղեկավարները կիմանան, թե ում հետ կապ հաստատեն, եթե կարիքն զգացվի:

Կառույցի ներկայացուցիչները կարող են նաեւ հաստատել այն թեկնածուների անունները, որոնք տարբեր երկրներում կմասնակցեն տեղական կամ ազգային ընտրություններին: Այս դերը կարող է վճռորոշ դառնալ այն դեպքերում, երբ նույն պաշտոնի համար մի քանի հայեր են իրար հետ մրցում եւ քվեների բաժանմամբ նրանցից ոչ մեկը չի հաղթում: Կառույցի նշանակած անձը վստահ կարող է լինել, որ կվայելի բոլորի վստահությունը:

Բայց նման խիզախ նախաձեռնությունը գործարկելուց առաջ անհրաժեշտ է կատարել մի քանի կարեւոր քայլեր:

ա) Հետազոտողների մի խումբ պետք է ուսումնասիրի նման կառույցներ ստեղծելու Իսրայելի, Հունաստանի, Լիբանանի, Իտալիայի եւ այլ երկրների փորձը, որը կարող է իրականացվել USC-ի` Հայկական ուսումնասիրությունների ինստիտուտի կողմից, որն էլ հետագայում լավագույն մեխանիզմները կմշակի ընտրություններ անցկացնելու աշխարհով մեկ, հաշվի առնելով ընտրողների քանակը յուրաքանչյուր երկրում, ընտրողների եւ թեկնածուների որակավորումները եւ կեղծարարությունների դեմ ձեռնարկված միջոցառումները: Վերոնշյալ ինստիտուտը կարող է նաեւ առաջարկել նշանակալից մանրամասներ համընդհանուր մարմնի կառուցվածքի եւ գործունեության վերաբերյալ (հանդիպման ընթացակարգ, հանձնաժողովներ, ենթահանձնաժողովներ, պաշտոնավարության ժամկետներ, նախագահի եւ փոխնախագահի ընտրություններ եւ այլն):

բ) Կառույցի հիմնադրման մասին որեւէ հասարակական հայտարարությունից առաջ, կազմակերպիչ կոմիտեն պարտավոր է կապի մեջ մտնել սփյուռքի ազդեցիկ կազմակերպությունների ղեկավարների հետ` նրանց ծանոթացնելու նոր նախաձեռնությանը եւ նրանցից ստանալու համապատասխան առաջարկներ եւ աջակցություն:

գ) Կազմակերպիչ կոմիտեն նաեւ պարտավոր է տեղյակ պահել Հայաստանի եւ Արցախի կառավարական պաշտոնյաներին ծրագրված նոր կազմակերպության (կառույցի) նպատակների մասին եւ ստանալ նրանց լուռ համաձայնությունը առանց գործնական միջամտության: Երբ նորընտիր կառույցը իրականություն դառնա եւ սկսի գործել, նրա իրավասու ներկայացուցիչները հաճախակի հանդիպումներ կունենան Հայաստանի եւ Արցախի պաշտոնատար անձանց հետ: Անհրաժեշտ է, սակայն, ապահովել համասփյուռքյան այս կառույցի անկախությունը, որպեսզի բացառենք հայ պաշտոնյաների վրա օտար պետությունների ճնշումների գործադրման ազդեցությունը կառույցի որոշումների վրա:

Հիմնադրվելուց հետո այս համազգային կառույցն առաջին անգամ սփյուռքում ստեղծելու է մի ներկայացուցչական մարմին, որն իր քաղաքական եւ տնտեսական հնարավորություններով կարողանալու է պաշտպանել հայերի շահերն աշխարհով մեկ:

ՀԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆՅԱՆ
«Կալիֆոռնիա կուրիեր»
Թարգմ. Հ. Ծ.

ԵՐԿԱԿԻ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

# ԵՄ-ը Սերբիային հորդորում է համակերպվել Կոսովոյի կորստին

**Եվրոմիությունում կարծում են, որ Սերբիան պետք է համակերպվի Կոսովոյի կորստյան մտքին: ԵՄ երկու խոշորագույն երկրների` Ֆրանսիայի եւ Գերմանիայի դեսպանները նման տեսակետ են արտահայտել Բելգրադի թերթերին տված հարցազրույցներում:**

**Դիվանագետները մասնավորապես նշել են, որ առավելապես ալբանացիներով բնակեցված Կոսովոն երբեք չի վերադառնա Սերբիայի ազդեցության ոլորտ: Ուստի Բելգրադը պարտավոր է բարիդրացիական հարաբերություններ հաստատել Պրիշտինայի հետ: «Գերմանական ալիք» ռադիոկայանը մեջբերում է երկու դեսպանների այն խոսքերը, որ դա Սերբիայի հետ Եվրոմիության հետագա մերձեցման գլխավոր պայմաններից մեկն է:**

**«Բեռլինում Կոսովոյի կարգավիճակի հարցը համարում են լուծված», Press թերթին հայտարարել է Սերբիայում Գերմանիայի դեսպան Վոլֆրամ Մաասը: Նրա խոսքերով, Բեռլինը Կոսովոն համարում է Սերբիայի հարեւան, ուստի նախկին տարածքի հետ լավ հարաբերությունները ԵՄ-ին Սերբիայի անդամակցության կարեւոր նախադրյալ են:**

**Բելգրադում Ֆրանսիայի դեսպան Ժան-Ֆրանսուա Տեռալը իր հերթին Vecernje Novosti թերթին տված հարցազրույցում հիշեցրել է, որ Փարիզը ճանաչել է Կոսովոյի անկախությունը: «Ստեղծված իրավիճակն անշրջելի է, եւ այդ հանգամանքը պետք է հաշվի առնել», ընդգծել է դեսպանը:**

**Բելգրադը փորձում է ապացուցել, որ ճանաչումը միջազգային իրավունքի նորմերի խախտում է: Սերբիան մտադիր է ՄԱԿ-ի շրջանակներում հասնել Կոսովոյի կարգավիճակին առնչվող Բելգրադ-Պրիշտինա բանակցությունների վերսկսմանը, նշում է «Գերմանական ալիքը»:**

# Միայն Ալիեւներն ու պետական դրոշը

**«Թուրան» գործակալության տեղեկացմամբ` Ադրբեջանի իշխանություններն անհանգստացած են երկրում իսլամի ազդեցության մեծացումից: Դա, ըստ իշխանության, «անցնում է բոլոր սահմանված չափանիշները եւ ձեռք է բերում անկառավարելի ընթացք»: Հետեւաբար Ադրբեջանում որոշել են բոլոր պետական պաշտոնյաների առանձնասենյակներից հանել մուսուլմանական գրականությունը, կրոնական ատրիբուտները` ներառյալ Ղուրանը: Սրանք նախկինում պարտադիր էին բոլոր պաշտոնյաների սենյակների համար, ինչպես Հեյդար Ալիեւի եւ Իլհամ Ալիեւի նկարներն ու Ադրբեջանի պետական դրոշը: Հիմա արդեն, փաստորեն, ադրբեջանցի պաշտոնյաների առանձնասենյակներում պարտադիր կլինեն միայն երկրի դրոշն ու հայր եւ որդի նախագահների նկարները:**

**Հ. Ա.**

# Լատինամերիկյան 33 երկրներ կստեղծեն նոր կառույց առանց ԱՄՆ-ի եւ Կանադայի



**Լատինական Ամերիկայի եւ Կարիբյան ավազանի երկրները պայմանավորվել են ստեղծել տարածաշրջանային նոր կառույց առանց ԱՄՆ-ի եւ Կանադայի մասնակցության: Պայմանավորվածությունը ձեռք է բերվել Մեքսիկայի Կանկուն քաղաքում ավարտված գագաթաժողովում:**

**Նոր դաշինքը կդառնա Ամերիկյան պետությունների կազմակերպության (ԱՊԿ) այլընտրանքը: Այդ կազմակերպությունը վերջին 50 տարում տարածաշրջանի գլխավոր համաժողովն է եղել, հիշեցնում է BBC գործակալությունը:**

**ԱՊԿ-ում որոշ պետություններ ԱՄՆ-ի հետ լուրջ հակասություններ ունեն տնտեսական քաղաքականության եւ առեւտրի հարցերում: Կազմակերպությանը քննադատում են նաեւ ԱՄՆ-ի շահերն առաջ մղելու համար:**

**Տարածաշրջանային նոր կազմակերպությունը, սակայն, չպետք է փոխարինի ԱՊԿ-ին, որը մշտական կազմակերպություն է եւ ունի սեփական գործառույթներ: Մեքսիկայի նախագահ Ֆելիպե Կալդերոնի խոսքերով, նոր կառույցը «պետք է ունենա տարածաշրջանային ինտեգրացման հասնելու գերակայություն եւ համընդհանուր հանդիպումներում պետք է պաշտպանի տարածաշրջանի շահերը»:**

**Կուբայի նախագահ Ռաուլ Կաստրոն Կալդերոնի առաջարկությամբ նոր կառույց ստեղծելու որոշումը անվանել է պատմական քայլ, որն ուղղված է «զուտ լատինամերիկյան եւ կարիբյան տարածաշրջանային կազմակերպության ձեւավորմանը»:**

**ԱՊԿ-ում Կուբայի անդամակցությունը կասեցված է 1962-ից: 2009-ին կազմակերպությունը որոշել է չեղյալ հայտարարել իր նախորդ վճիռը, բայց Կուբան նախընտրեց չվերադառնալ ԱՊԿ:**

**Վենեսուելայի նախագահ Ուգո Չավեսը նոր կառույց ստեղծելու որոշումն անվանել է կարեւոր քայլ, որ ուղղված է ԱՄՆ-ի կողմից տարածաշրջանի «գաղութացման» դեմ:**

**Կանկունի գագաթաժողովը միաձայն պաշտպանել է Արգենտինային, որն իրենն է համարում Մեծ Բրիտանիայի զավթած Ֆոլկլենդյան (Մալվինյան) կղզիները: «Ազգը» գրել է, որ բրիտանացիները նավթի հետախուզական հորատումներ են սկսել Արգենտինայի ափերից ընդամենը 450 կմ հեռու գտնվող այդ կղզիների ծանծաղուտում, հարուցելով արգենտինացիների զայրույթը:**

**Գագաթաժողովում քննարկվել է նաեւ հունվարյան սաստիկ երկրաշարժից ավերված Հաիթիին օգնելու լատինաամերիկյան ծրագիրը:**

**Ենթադրվում է, որ լատինամերիկյան եւ կարիբյան 33 երկրներ ընդգրկող նոր կառույցի պաշտոնական անվանումը կորոշվի առաջիկա գագաթաժողովում:**

AZG NEW PDF.qxd 1/1/2002 2:41 AM Page 1



# «Գեղarm»-ը հետամուտ է համահայկական գրական-գեղարվեստական հանդես լինելու նպատակին

«Գեղarm» գրական-գեղարվեստական, թարգմանական հանդեսն Արցախում ծնունդ առավ 2002 թվականին, բանաստեղծ, հրապարակախոս եւ թարգմանիչ Հրանտ Ալեքսանյանի նախաձեռնությամբ ու խմբագրությամբ: Անկախ պարբերականը, որի հրատարակիչը «Ոգի-Նաիրի» գեղարվեստի կենտրոնն է, իր որակով ու ձեւով արագորեն ուրույն տեղ գտավ ոչ միայն արցախյան պարբերականների շարքում: Առաջին իսկ համարներից հանդեսը շահագրգիռ ուշադրության արժանացավ գրականության ու արվեստի նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունք ունեցող հասարակայնության շրջանում՝ բերելով թարմություն եւ լրացնելով տպագիր մամուլում նմանատիպ հանդեսի բացակայությունը: Պարբերականը ստանձնել է արժեքավոր, նորաշունչ գրական գործերը ընթերցողներին մատուցելու, գրական-գեղարվեստական արդի խնդիրները վերհանելու, ինչու չէ, նաեւ դրանց վերաբերյալ առաջարկվող լուծումները բաց քննարկելու ոչ հեշտ առաքելությունը:




Պարբերականը գերազանցապես առաջնորդվում է իր էջերում նորագույն գրականության ներկայացուցիչների՝ ուշագրավ գործեր զետեղելու անշրջանցելի սկզբունքով: «Գեղarm» մուտք են գործում ոչ բոլոր հեղինակները: Հանդեսն ունի գեղարվեստական հստակ չափորոշիչներ. խմբագրություն մտած շատ գործեր հեղինակներին են վերադարձվում հիմնավոր պատճառաբանությամբ:

Բնագրային նյութերին զուգահեռ, հանդեսում զգալի տեղ է հատկացվում թարգմանական գործերին: Հայաստանյան եւ սփյուռքի թարգմանիչների հետ իրենց արհեստավարժությամբ աչքի են ընկնում նաեւ արցախցի թարգմանիչները: Հանդեսի ներկա համբավը խորհրդանշում են գրողներ ու թարգմանիչներ Ռ. Դավոյանը, Հ. Էդոյանը, Հ. Մովսեսը, Հ. Թամրազյանը, Գ. Պըլտյանը, Ա. Ալեքսանյանը, Վ. Սուրենյանը, Ա. Հովհաննիսյանը, Վ. Այվազյանը, Հ. Ալեքսանյանը, Կ. Խալաթովան, Ք. Քոչարյանը, Ս. Ստեփանյանը եւ այլք:

«Գեղarm»-ի նախավերջին՝ 40-րդ համարում Գ. Բախտամյանի (Ստեփանակերտ) թարգմանությամբ տպագրվել է բանասիրական գիտությունների դոկտոր, ռուսագիր հայտնի դոստոեւսկիագետ Կարեն Ստեփանյանի «Դոստոեւսկու մի տարօրինակ երազի մասին» ուսումնասիրությունը, որտեղ հեղինակը հռչակավոր գրողի հայտնի երազը վերծանում է այլ ելակետից: Նույն թարգմանչի կողմից ընթերցասերներին է ներկայացված հատված Վիդիա Նայպոլի «Մեր համապարփակ քաղաքակրթությունը» ելույթից: Համարում տեղ է գտել նաեւ հատված Գյունտեր Գրասսի «Հիտլերյուգենդը» վեպից՝ Ս. Ստեփանյանի (Ստեփանակերտ) թարգմանությամբ:

Առաջնային տեղ է հատկացվում պոեզիային: Հանդեսի վերոնշյալ համարում ընթերցողները կարող են ծանոթանալ Ֆրանց Վերֆելի, Բերթոլտ Բրեխթի բանաստեղծություններին, ինչպես եւ իտալական ժամանակակից պոեզիային:

Թեմաների եւ ժանրերի բազմազանությամբ ուշագրավ են հանդեսի վերջին համարում տպագրված նյութերը: Ի մասնավորի ուշադրության է արժանի գերմանացի գրող Հերման Բրոխի «Մեթոդապես կառուցված» պատմվածքը՝ Աշոտ Ալեքսանյանի թարգմանությամբ: Ի դեպ, վերջինիս թարգմանական գործերը առանցքային տեղ են գրավում հանդեսի էջերում: Ուշագրավ են նաեւ Դիանա Համբարձումյանի «Աստծո բնակեցրած երկրում» անտիպ վեպից հատվածները, ինչպես նաեւ Հակոբ Օշականի պատմվածքներն անտիպ էջեր շարքից:

Արտասահմանյան շատ հեղինակների՝ հայերեն թարգմանությամբ մի շարք գործեր առաջին անգամ հրապարակվել են «Գեղarm»-ում: Այստեղ են, օրինակ, «հայացման» իրենց ուղին բռնել ավստրիացի մեծանուն գրող Ինգեբորգ Բախմանի, Նոբելյան մրցանակի դափնեկիր, անգլիացի դրամատուրգ Հարոլդ Փինթերի, ծագումով հնդիկ, անգլիագիր Ս. Ռուշդիի, ռուս արձակագիր Վ. Պելեւինի եւ այլոց ստեղծագործությունները: Հանդեսը առանձնահատուկ ուշադրություն է հատկացնում նաեւ, այսպես կոչված՝ փոքր լեզուների գրականությանը: Միջնորդավորված թարգմանությամբ հայ գրասերներին են արդեն ներկայացվել նմուշներ սլովենյան, խորվաթական, մակեդոնական, սլովակյան, շվեդական, ֆիննական, դանիական եւ այլ գրականություններից՝ նախնական պատկերացում տալով այդտեղ կատարվող գրական շարժերին:

«Գեղarm»-ը եռալեզու հանդես է, ինչը լրացուցիչ հետաքրքրություն է առաջացնում այդ լեզուներին տիրապետող գրասերների շրջանում: Պարբերականն ունի մշտապես գործող ռուսերեն եւ անգլերեն թարգմանական էջեր: Ռուսերեն բաժնում հիմնականում տպագրվում են հայ ժամանակակից արձակագիրների թարգմանված գործեր, ինչպես նաեւ՝ ռուսալեզու հայազգի գրողների ստեղծագործություններ: Իսկ անգլերեն թարգմանական էջը լիովին հատկացվում է հայ արդի բանաստեղծների գործերին: Թարգմանչուհի Քրիստինե Քոչարյանի շնորհալի ջանքով բազմաթիվ հեղինակների ստեղծագործություններ արդեն մի քանի տարի է՝ իրենց «անգլիական ճամփորդությունն» են կատարում գրական տարբեր հրատարակություններում: Սա համարձակ գրական մի ծրագիր է, որ հանդեսը փորձում է հաջողությամբ պսակել:

Հանդեսի առանձին բաժնում թռուցիկ տրվում է քրոնիկոն՝ անցած շաբաթներում գրական-մշակութային կյանքում տեղ գտած ուշագրավ իրադարձությունների մասին, իսկ «Խճանկար» խորագրի ներքո տեղադրվում են արվեստի բարձրարժեք գործերին, ճանաչված գրողների ու արվեստագետների կյանքին վերաբերող հիշարժան տեղեկություններ:

«Գեղarm»-ի գրադարակը գրասերներին է հրամցնում Հայաստանի, Սփյուռքի եւ Արցախի գրողների ու արվեստագետների ստեղծագործությունների, առանձին աշխատությունների, նորընծա հրատարակությունների մասին սեղմ տեղեկություններ: Զետեղվում են հետաքրքրական հարցազրույցներ՝ գրական ու արվեստի գործիչների հետ:

Գրական-գեղարվեստական հանդեսի բովանդակությանը համահունչ է շապիկի գունավոր ձեւավորումը: Համարներում պարբերաբար տպագրվում են հայ ճանաչված եւ շնորհալի նկարիչների ստեղծագործությունների արտապատկերները, նրանցից գրեթե յուրաքանչյուրի համար ապահովելով մի յուրահատուկ տեղեկագիր-ցուցահանդես: Վերջին համարներում տեղ են գտել Արշիլ Գորկու ստեղծագործությունների արտապատկերները, Սիթսե Բաքքերի գրաֆիկական աշխատանքներն ու Ռուսլան Սարգսյանի լուսանկարները:

Տպագրության հետ կապված դժվարին խնդիրները խոչընդոտում, բայց չեն խափանում «Գեղarm»-ի ընթացքը: Հանդեսի պատասխանատուները պատվախնդրորեն շարունակում են գրասերներին բարձրաճաշակ ստեղծագործություններ հրամցնելու, նրանց ոգու ծարավը հագեցնելու գործը, միեւնույն ժամանակ՝ ձգտում նոր ձեռնարկումների: «Գեղarm»-ը հետամուտ է աշխարհի տարբեր անկյուններում գործող հայ գրականության ու արվեստի շնորհալի գործիչների հետ համագործակցելու եւ համահայկական գրական հանդես լինելու նպատակին: Արցախում լույս ընծայվող պարբերականն ունի այդպիսին դառնալու հնարավորություններ՝ հաշվի առնելով ստեղծագործական ներուժն ու նպատակասլացությունը: «Գեղarm»-ը տարածվում է Հայաստանում, Սփյուռքի գրասեր շրջանակներում: Հանդեսի խմբագրի տեղեկացմամբ՝ 48 էջանոց պարբերականն ապագայում կընդլայնի ծավալը եւ կունենա ամբողջովին գունավոր հրատարակություն: Իսկ սեփական կայք-էջ ստեղծելով՝ էլ ավելի հասանելի կդառնա աշխարհասփյուռ հայ եւ ոչ միայն հայ ընթերցասերներին:

ՆԱՐԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ
Ստեփանակերտ

ՍՈՖԻԱ

# Բուլղարիայում հայագիտության կենտրոն է բացվել

«Նյուզ.ամ»-ի փոխանցմամբ, «Մայրենի լեզվի տարի» ձեռնարկման շրջանակներում, Բուլղարիայում Հայաստանի դեսպանության նախաձեռնությամբ փետրվարի 23-ին տեղի է ունեցել Սոֆիայի Ս. Կլիմենտ Օրհիդսկի համալսարանի արեւելյան լեզուների ֆակուլտետի հայագիտության նոր կենտրոնի բացման արարողությունը: Կենտրոնը վերանորոգվել եւ վերազինվել է հայ բարերարներ Հակոբյանների ընտանիքի միջոցներով եւ Հայաստանի դեսպանության օժանդակությամբ:



Միջոցառմանը ներկա են եղել բարերարներ տեր եւ տիկին Հակոբյանները, Բուլղարիայի կրթության, երիտասարդության հարցերի եւ գիտության նախարարության փորձագետ, Հայաստանի պատասխանատու Ինա Պոպովան, Բուլղարիայում Հայաստանի դեսպանության դիվանագիտական անձնակազմը, Պլովդիվում Հայաստանի պատվո հյուպատոսը, համալսարանի դասախոսներն ու ուսանողները, Հայ առաքելական եկեղեցու Բուլղարիայի թեմական խորհրդի ատենապետ Ռուբեն Գրիգորյանը, Սոֆիայի հայ համայնքի ներկայացուցիչներ:

Կենտրոնի վերաբացման կապակցությամբ Ինա Պոպովան ընթերցել է Բուլղարիայի կրթության, երիտասարդության հարցերի եւ գիտության նախարար Սերգեյ Իգնատովի շնորհավորական ուղերձը:

Միջոցառման մասնակիցներն ունկնդրել են կենտրոնի ուսանողների պատրաստած գրական ներկայացումը, ինչել են Եղիշե Չարենցի, Պարույր Սեւակի, Համո Սահյանի եւ Պեյո Յավորովի բանաստեղծությունները:

Հ. Ա.

# ԲԱՖՏԱ-ի մրցանակակիրները

ԲԱՖՏԱ-ն՝ կինոյի եւ հեռուստատեսային արվեստների բրիտանական ակադեմիան հրապարակել է 2009-ի մրցանակակիրների անունները, համաձայն որի նախկին ամուսիններ Ջեյմս Կամերոնի եւ Քեթրին Բիգելոուի միջեւ ծավալված մրցակցությունը, որն ԱՄՆ-ում Օսկարի թեկնածությունների դեպքում հօգուտ Կամերոնի էր քվեարկել, այստեղ հօգուտ Բիգելոուի է ավարտվել: Նրա «Հըրթ Լոքըր» ֆիլմը ստացել է միանգամից 6 մրցանակ (լավագույն ֆիլմ, լավագույն ռեժիսոր, ինքնատիպ սցենար, կինեմատոգրաֆիա, մոնտաժ եւ ձայնահնչյունային անվանակարգերում), Կամերոնի աղմուկ հանած «Ավատարին» թողնելով ընդամենը 2 մրցանակ՝ դիզայնի եւ հատուկ տեսողական էֆեկտների անվանակարգերում:

Լավագույն բրիտանական ֆիլմ է ճանաչվել Կիս Կասանդերի «Ֆիշ Տենկը» («Ձկան ավազանը»), իսկ լավագույն օտարալեզու ֆիլմ՝ Պասկալ Կոշետոյի «Մարգարեն» (Ֆրանսիա):

Գլխավոր դերասանի մրցանակը վաստակել են Կոլին Ֆըրթը («Միայնակ մարդը» ֆիլմից) եւ Քարի Մուլիգանը («Կրթություն» ֆիլմից):

Երկրորդական դերերի մրցանակը շնորհվել է Քրիստոֆեր Ուոլդին («Շնորհազուրկ ապօրինածինները») եւ Մո'նիքին («Թանկարժեք»):

Կինեմատոգրաֆիային մատուցած անգնահատելի ծառայությունների համար պարգեւատրվել է Ջո Դանտոնը: Իսկ հանրության քվեարկություններով խոստումնալից աստղի «Օրենջ» մրցանակը շնորհվել է Քրիստեն Ստյուարդին:

Հ. Ծ.

ԵՐԳԻԾԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺ

# Հայերի եւ իտալացիների խիստ հավանական մասնակցությունը ... Մարս մոլորակի մշակութային ծրագրերին

Մարս մոլորակ կատարելիք առաջիկա ուղեւորությունը, տնտեսական ճգնաժամը հաղթահարելուն միտված լինելուց զատ, մշակութային երեւելի ձեռքբերումներ է խոստանում: Ցուցադրվելու են տարբեր գրականությունների ու արվեստների հետխորհրդային գոհարներ եւ ադամանդներ:

Հայաստանի ազատ ոճի պոեզիան ներկայացվելու է անցյալ դարի կոմսոմոլներ, ներկա դարի պետական մրցանակի դափնեկիր պոետների արձակ-համարձակ բանաստեղծությունները՝ Արտո-Հենդո- Դավո:

Հայ ազգի դերասանական նվաճումները տեղ կհասցնեն Շահող-կտրոն Հրանտ ձյաձյան՝ Երեւանի ազգային բարբառի առանձնահատկություններով, եւ վաստակավոր խոսքաբան, հայ-եզդիական բացատրական բառարանի հիմնադիր Աշոտը (առաջին կատարում):

Ընտանեկան զառը հեռուստամրցույթում շահել է «Արմենիան», որը Մարսի հեռափչակներ է արձակելու հատկապես իր...դասական հումորը (Հայկո-Մկո եւ այլն):

Կարծիք կա, որ հաղթանակներ են արձանագրվելու երգակատարողական ասպարեզում, քանի որ ժանրի դրոշը Մարսի բարձունքներից մեկի վրա տնկելու են... Ժինջիլը, Ճպռոտը եւ Չէ Մին:

Մշակութային տասնօրյակը եզրափակելու են վերջին շրջանի ազգային հեռուստասերիալները, որոնք ցուցադրելու հայտ են ներկայացրել նաեւ ուրիշ մոլորակներ՝ ի մասնավորի՝ Մերկուրին եւ Վեներան: Բացի եղածներից, վերջիններս պատվիրել են նաեւ նոր սրտաճմլիկ թեմաների էկրանային մարմնավորում՝ «Տէցի կրուգի ռազբորկան», «Հայրաքաղաքի քաղաքապետի ընտանեկան կապալը», ««Հայքար, հայքար մինչեւ վերջի» միտինգա-գեղագիտական դաստիարակությունը»», «Նոր հայկական ժամանակների բանտային հուշերի հրատարակմամ մամլո ասուլիսը», հայ ժողովրդի զավակների ուրիշ տեսարաններ:

Իտալացիները, իմանալով, որ Մարս են սուրում Մաշտոցի զավակների հեռուստաֆիլմանվաճումները, վճռեցին հեռու մնալ այդ ասպարեզը ներկայացնելուց եւ նմանատիպ խորհուրդներ էլ տվեցին ամերիկյան կինոյի կնքահայրերին ու Ալ Պաչինոյին:

Սակայն կա մի մրցահարթակ, որում իտալացիները կյանքները կտան, բայց չեն պարտվի. նրանք Մարսի մշակութային հանդես են տանելու Սիցիլիայում բեմադրված...«Հայկական մաֆիայի ինկուբացիոն շրջանը Պալերմոյի պառնիկներում» մելոդրամայի սցենարը:

ՎԱՆԻԿ ՍԱՆԹՐՅԱՆ

AZG NEW PDF.qxd 1/1/2002 2:41 AM Page 1



# Երիտասարդականը սկսեց նախապատրաստությունը

## *Հենրիխ Մխիթարյանն այս անգամ չի հրավիրվել հավաքական*

Այսօր ֆուտբոլի Հայաստանի երիտասարդական հավաքականը կսկսի նախապատրաստությունը մարտի 3-ին Իռլանդիայի հավաքականի հետ կայանալիք Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարին: Այդ հանդիպումը տեղի կունենա Դուբլինի «Թալագտ» մարզադաշտում: Խաղը կսկսվի Երեւանի ժամանակով 23.30-ին:

Երիտասարդական հավաքականի գլխավոր մարզիչ Ֆլեմինգ Սերիցլեւը «Ռեժինե» հյուրանոցում կազմակերպվող ուսումնամարզական հավաքի է հրավիրել 18 ֆուտբոլիստի: Ցավոք, նրանց թվում չէ հավաքականի առաջատար եւ ռմբարկու Հենրիխ Մխիթարյանը: Հենց վերջինիս գրագետ ու արդյունավետ խաղի շնորհիվ անցած տարվա նոյեմբերի 17-ին Երեւանում Հայաստանի երիտասարդական հավաքականը 4-1 հաշվով ջախջախեց իռլանդացիներին: Այդ խաղում Մխիթարյանը դարձավ հեթ-տրիկի հեղինակ, որն առաջինն էր թե ազգային, թե երիտասարդական հավաքականների ողջ պատմության ընթացքում:


ՖՈՏՈԼՈՒՐ

Ինչպես տեղեկացանք Armsport.am կայքէջից, Մխիթարյանը պետք է ընդգրկվեր Հայաստանի ազգային հավաքականի կազմում, որը նույն օրն Անթալիայի «Աթաթուրք» մարզադաշտում ընկերական հանդիպում է անցկացնելու Բելառուսի ընտրանու հետ: Այդ խաղը սկսվելու է Երեւանի ժամանակով 19-ին: Սակայն ինչպես նշել է ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը, Դոնեցկի «Մետալուրգի» ղեկավարությունը խնդրել է այս անգամ Հենրիխին չհրավիրել հավաքական, քանի որ մարտի 6-ին թիմը կարեւոր հանդիպում ունի: Շատ ափսոս, որ Հենրիխը չի ժամանելու հանդիպմանը: Նրա կարիքն այս պահին շատ է զգացվում: Վերջին երկու հանդիպումներում մեր երիտասարդները հաջող ելույթներ ունեցան, որի շնորհիվ Ֆլեմինգ Սերիցլեւը պահպանեց իր տեղը գլխավոր մարզչի պաշտոնում: Իսկ առանց Մխիթարյանի մեր երիտասարդականին շատ դժվար կլինի հյուրընկալվելիս դիմադրել իռլանդացիներին:

Եվ այսպես, առաջիկա հանդիպմանը հավաքականի կազմում կնախապատրաստվեն հետեւյալ ֆուտբոլիստները.

**Դարպասապահներ՝** Էդուարդ Հովհաննիսյան («Փյունիկ»), Գեւորգ Պրազյան («Արարատ»):

**Պաշտպաններ՝** Արտաշես Առաքելյան («Կիլիկիա»), Գագիկ Դաղբաշյան, Հովհաննես Համբարձումյան (երկուսն էլ՝ «Բանանց»), Լեւոն Հայրապետյան («Համբուրգ», Գերմանիա), Արտակ Եդիգարյան («Փյունիկ»):

**Կիսապաշտպաններ՝** Դավիթ Մանոյան, Արթուր Յուզբաշյան, Էդգար Մալաքյան (բոլորն էլ՝ «Փյունիկ»), Մասիս Ոսկանյան («Բրյուգե», Բելգիա), Արտակ Դաշյան («Մետալուրգ» Ուկրաինա):

**Հարձակվողներ՝** Գեւորգ Ղազարյան, Ալբերտ Թադեւոսյան, Միհրան Մանասյան (բոլորն էլ՝ «Փյունիկ»), Հրաչ Յագան («Ստանդարտ», Բելգիա), Հովհաննես Գոհարյան (ԲԱՏԷ, Բելառուս), Գեւորգ Բադալյան («Բանիկ», Մոստ, Չեխիա):

Հավաքականը մարզումները կանցկացնի Ավանում կառուցվող հավաքական թիմերի տեխնիկական կենտրոնի խաղադաշտում: Մարտի 1-ին մեր ընտրանին կմեկնի Դուբլին:

Ընտրական 2-րդ խմբում ընդգրկված Հայաստանի երիտասարդական հավաքականը շատ անհաջող սկսեց ընտրական մրցաշարը: Առաջին խաղում մեր ֆուտբոլիստները հյուրընկալվելիս 1-2 հաշվով զիջեցին շվեյցարացիներին, այնուհետեւ Երեւանում հետեւեցին պարտությունները Թուրքիայի (2-5) եւ Շվեյցարիայի (1-3) հավաքականներից: Աշնանը մեր ընտրանին 4-րդ անընդմեջ պարտությունը կրեց Թուրքիայում, ընդ որում միակ գոլը բաց թողեց վերջին րոպեին: Եվ միայն 5-րդ խաղում, նոյեմբերի 14-ին Երեւանում հաջողվեց առաջին միավորը վաստակել՝ ոչ-ոքի (1-1) ավարտելով հանդիպումն էստոնացիների հետ: Ընդ որում մեր ֆուտբոլիստները ձեռքից բաց թողեցին հաղթանակը: Ճիշտ է, 3 օր անց վերջապես հայ ֆուտբոլիստները ճաշակեցին հաղթանակի քաղցրությունը՝ 4-1 հաշվով սեփական հարկի տակ ջախջախելով իռլանդացիներին:

ՀՀ երիտասարդական հավաքականը 6 խաղից հետո վաստակելով 4 միավոր, ընտրական 2-րդ խմբում ընթանում է նախավերջին՝ 5-րդ տեղում: Նույնքան միավորով աղյուսակը եզրափակում է Իռլանդիայի հավաքականը: Վերջինս եւս անհաջող մեկնարկեց՝ սեփական հարկի տակ 0-3 հաշվով զիջելով թուրքերին: Այնուհետեւ իռլանդացիները միեւնույն 1-1 հաշվով ավարտեցին մրցախաղերը վրացիների (երկու անգամ), էստոնացիների եւ շվեյցարացիների հետ:

Ընտրական 2-րդ խմբի առաջատարը Շվեյցարիայի հավաքականն է, որը 7 հանդիպումներում վաստակել է 16 միավոր: Թուրքերը 6 խաղից հետո 10 միավորով 2-րդ տեղում են: Մեկ միավոր պակաս է վաստակել Էստոնիայի ընտրանին: Հենց այս եռյակն էլ պայքարում է ուղեգրերի համար:

# Ռուսական քառյակն ուժեղագույնն էր

**Կանանց բիաթլոնի 4x6 կմ փոխանցումավազքում մրցատարածությունը բոլորից արագ հաղթահարեց Ռուսաստանի հավաքականը, որի կազմում հանդես էին գալիս Սվետլանա Սլեպցովան, Աննա Բոգալի-Տիտովեցը, Օլգա Մեդվեդցեւան եւ Օլգա Զայցեւան: Նրանք մրցատարածությունը հաղթահարեցին 1 ժամ 9 րոպե 36,3 վրկ-ում:**

**Միայն Սվետլանա Սլեպցովայի համար էր ոսկե մեդալն առաջին օլիմպիական պարգեւը: Զայցեւան եւ Բոգալին օլիմպիական չեմպիոնուհիներ էին հռչակվել չորս տարի առաջ Թուրինում, իսկ Մեդվեդցեւան, որ այն ժամանակ մրցումներին մասնակցում էր Պիլեւա ազգանունով, դեռեւս Սոլթ Լեյք Սիթիում էր ոսկե մեդալ նվաճել:**




**Արծաթե մեդալը նվաճեց Ֆրանսիայի հավաքականը, որը երկու անգամ կրակահերթում վրիպեց ու ստիպված էր տուգանային երկու շրջան կատարել: Բրոնզե մրցանակակիր դարձավ Գերմանիայի թիմը:**

## Քառորդ եզրափակչի զույգերը որոշվեցին

Հոկեյի մրցաշարում անցումային խաղերից հետո հայտնի դարձան քառորդ եզրափակչի բոլոր մասնակիցները: Ինչպես եւ սպասվում էր, Կանադայի հավաքականն առանց դժվարության, խոշոր հաշվով (8-2) հաղթեց գերմանացիներին: Քառորդ եզրափակիչում կանադացիները մրցելու են ռուսների հետ:

Իսկ ահա Սլովակիայի ընտրանուն շատ մեծ ջանքերի գնով հաջողվեց կոտրել նորվեգացիների դիմադրությունը (4-3) եւ ուղեգիր նվաճել: Այսօր սլովակներն ուժերը կչափեն շվեդների հետ: Չեխերն էլ շատ մեծ դժվարությամբ մտան հաջորդ փուլ՝ լրացուցիչ ժամանակում 3-2 հաշվով հաղթելով լատվիացիներին: Քառորդ եզրափակիչում չեխերը կմրցեն ֆինների հետ: Վերջին զույգը կկազմեն ԱՄՆ-ի եւ Շվեյցարիայի հավաքականները: Շվեյցարացիները միայն բուլիտներով կարողացան հաղթել Բելառուսի ընտրանուն (3-2):

## Եզրափակիչում ԱՄՆ-ն ու Կանադան

**Հայտնի դարձան կանանց տափօղակով հոկեյի եզրափակիչի մասնակիցները: Վճռորոշ խաղում չեմպիոնի տիտղոսը կվիճարկեն Կանադայի եւ ԱՄՆ-ի հոկեյիստուհիները: Ամերիկացի մարզուհիները մեծ առավելությամբ՝ 9-1 հաշվով հաղթեցին Շվեդիայի հավաքականին, իսկ Կանադայի ընտրանին պարտության մատնեց ֆիններին (5-0):**

*ՇԱԽՄԱՏ*

# Հաշտություն նաեւ 9-րդ տուրում

**Մեկօրյա հանգստից հետո Լինարեսի շախմատի մրցաշարի մասնակիցները կրկին նստեցին խաղասեղանների շուրջը: Լեւոն Արոնյանին այս անգամ էլ չհաջողվեց հաղթել: Բորիս Գելֆանդի հետ պարտիան էլ ավարտվեց ոչ-ոքի: Այսպիսով, Լեւոնը բոլոր 9 պարտիաներում էլ հաշտություն կնքեց մրցակիցների հետ: Ավարտական տուրում նա սպիտակներով խաղալու է Վուգար Հաշիմովի հետ: 9 տուրից հետո Արոնյանը 4,5 միավորով ընթանում է 3-րդ տեղում:**

**9-րդ տուրում կենտրոնականն Ալեքսանդր Գրիշչուկի եւ Վեսելին Թոփալովի մրցավեճն էր: Սպիտակներով խաղացող Գրիշչուկը հաղթեց ու վաստակելով 5,5 միավոր, հավասարվեց Թոփալովին: Վալյեխոն ոչ-ոքի ավարտեց պարտիան Հաշիմովի հետ: Վերջինս Գելֆանդի հետ 4 միավորով բաժանում է 4-5-րդ տեղերը: Աղյուսակը 3,5 միավորով եզրափակում է Վալյեխոն:**

**Մրցաշարի հաղթողը հայտնի կդառնա ավարտական տուրում կայանալիք Թոփալով-Գելֆանդ, Վալյեխո-Գրիշչուկ մրցախաղերում:**

## Ոչ-ոքի «Գուրիայի» հետ

**Ուռեկիում ուսումնամարզական հավաք անցկացնող «Ուլիսը» ստուգողական առաջին խաղում ուժերը չափեց Լանչխութիի «Գուրիայի» հետ: Հանդիպումն անցավ եղանակային անբարենպաստ պայմաններում, ինչը զգալիորեն դժվարացրել էր ֆուտբոլիստների գործողությունները: Դարպասները մնացին անառիկ:**

# Արսեն Ներսիսյանը վերջնագիծ չհասավ

**Վանկուվերի ձմեռային օլիմպիական խաղերում մրցասպարեզ դուրս եկավ Հայաստանի 3-րդ պատվիրակը՝ լեռնադահուկորդ Արսեն Ներսիսյանը: Նա մասնակցեց հսկա ոլորավայրէջքի մրցումներին: Արսենի ելույթն անհաջող էր: Մրցումների ժամանակ նա կորցրեց հավասարակշռությունը, վայր ընկավ ու չհասավ վերջնագիծ: Արսենի բախտին արժանացան եւս 13 լեռնադահուկորդներ: Իսկ ընդհանուր առմամբ մեկնարկի էին դուրս եկել 103 լեռնադահուկորդներ:**


**Օլիմպիական չեմպիոն Կառլո Յանկա**

**Բոլորից արագ մրցատարածությունը հաղթահարեց եւ օլիմպիական չեմպիոն հռչակվեց շվեյցարացի Կառլո Յանկան (2:37:83): Արծաթե մրցանակակիր դարձավ նորվեգացի Կյետիլ Յանորուդը, իսկ բրոնզե մեդալը բաժին հասավ նրա հայրենակից Աքսել Լունդ Սվինդալին:**

# Մարզիչները գոհ էին արդյունքից

**Չեմպիոնների լիգայի մրցաշարում կայացան 1/8 եզրափակիչի եւս երկու հանդիպումներ: Շատերի համար անսպասելի գերմանական «Շտուտգարտը» սեփական հարկի տակ լուրջ դիմադրություն ցույց տվեց «Բարսելոնին»: Ավելին, առաջին խաղակեսում դաշտի տերերը Կակաուի հարվածի շնորհիվ բացեցին հաշիվը: Միայն ընդմիջումից քիչ անց Իբրահիմովիչին հաջողվեց խփել պատասխան գնդակն ու «Բարսելոնին» փրկել պարտությունից:**

**Խաղից հետո երկու թիմերի մարզիչներն էլ գոհ էին արդյունքից:**

**Քրիստիան Գրոս** **(«Շտուտգարտ»)-«Բարսելոնի» հետ ոչ-ոքին մեզ համար պատվաբեր է: Աշխարհում շատ չեն այն ակումբները, որոնք կարող են հավասար պայքար մղել «Բարսելոնի» դեմ: Տեսնենք, թե կբավականացնի՞ այդ ոչ-ոքին հաջորդ փուլ մտնելու համար: Առաջին խաղակեսում մենք շատ լավ էինք խաղում եւ հիանալի գոլ խփեցինք: Պետք է էլի գոլեր խփեինք, սակայն չբավականացրեց դիպուկությունը: Բացի այդ էլ, հոյակապ էր խաղում Վիկտոր Վալդեսը: Իհարկե, լավ կլիներ, որ ամբողջ 90 րոպեն նման բարձրակարգ խաղ ցուցադրեինք:**

**Երկրորդ խաղակեսում մի փոքր թուլացանք, առջեւի գծում խաղը չէր ստացվում: Պաշտպանությունում էլ մրցակցին աչքաթող արինք: Իսպանացիներն իրենց լավ դրսեւորեցին, գոլ խփելու պահեր էլ շատ ունեցան: Ամեն դեպքում 1-1 հաշիվը լավ արդյունք է:**

**Խոսեպ Գվարդիոլա** **(«Բարսելոնա»)-Մենք այնքան էլ հստակ չէինք գործում, երբ գնդակին տիրում էին մրցակիցները: Ընդմիջումից հետո կարգավորեցինք խաղն ու գոլ խփեցինք, ինչն օգնեց մեզ հանգստանալ: Սեփական հարկի տակ հաղթելու համար անհրաժեշտ կլինի ջանքեր գործադրել: Մրցակիցն ապացուցեց, որ ուժեղ է եւ կարող է պատժել:**

**Ֆրանսիայի չեմպիոն «Բորդոն» հյուրընկալվելիս 1-0 հաշվով հաղթեց հունական «Օլիմպիակոսին»: Միակ գնդակը 45-րդ րոպեին խփեց Սիանին:**

# Կոտդիվուարցիները հրավիրում են Հիդինքին

ՌԴ հավաքականի գլխավոր մարզիչ Գուս Հիդինքը Կոտ դ'Իվուարի հավաքականի ֆուտբոլիստներից հրավեր է ստացել ֆուտբոլի աշխարհի առաջնության ժամանակ գլխավորելու երկրի ընտրանին: Այդ առաջարկը Հիդինքին է փոխանցել Դիդյե Դրոգբան:

Հիդինքը նշել է, որ այդ հարցի շուրջը մտածել է պետք: Ըստ Հիդինքի, եթե ՌԴ ֆուտբոլային միության նոր ղեկավարությունը ցանկանում է արդեն այժմ նոր մարզիչ հրավիրել հավաքականի համար, ապա կարելի է պայմանագիրը ժամկետից շուտ չեղյալ համարել ու գլխավորել Կոտ դ'Իվուարի հավաքականը:

Հիշեցնենք, որ Հիդինքը մինչեւ աշխարհի առաջնության ավարտը պայմանագիր ունի ՌԴ հավաքականի հետ: Իսկ օգոստոսի 1-ից նա գլխավորելու է Թուրքիայի հավաքականը:

Ինչ վերաբերում է ՌԴ հավաքականի նոր գլխավոր մարզչին, ապա ըստ ռումինական լրատվամիջոցների, հնարավոր է ընտրանու ղեկը հանձնվի Դոնեցկի «Շախտյորի» ներկայիս մարզիչ, ռումինացի Միրչա Լուչեսկուին: Վերջինիս տարեկան աշխատավարձը կկազմի 3 մլն եվրո: Լուչեսկուն չի բացառել ՌԴ հավաքականը գլխավորելու հնարավորությունը:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 2/24/2010 23:21 Page 1



ԱԶԳ

# Օրվա հետքերով

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԳԻԾԱՆՔ

## Տիեզերաժողով

*(Եղել է կամ կլինի)*

Տիեզերական ժողով էր գումարվում: Օրակարգում քննարկվում էր մեկ հարց՝ «Տարածքային ամբողջականությո՞ւնն է կարեւոր, թե՞ ազգերի ինքնորոշման իրավունքը»: Տիեզերաժողովին ներկա էին գերտերությունների առաջին դեմքերը: Իտալիայի վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնին, վերջին ծեծուջարդից հետո քիթբերանը վիրակապերի մեջ, կողքից բզելով Սարկոզիին, առաջինն ինքը խոսեց.

- Իմ կարծիքով՝ տարածքային ամբողջականությունն ավելի կարեւոր է, Հռոմեական կայսրության մեր տարածքներից մեզ ի՞նչ է մնացել, ժամանակն է մեր տարածքները հետ վերադարձնելու, ճիշտ չէ՞մ ասում, Սարկոզի, դու էլ Ֆրանսիական կայսրության հողերի հարցը դիր: Սարկոզին ոտքի կանգնեց, հատուկ ցուցադրելով իր բարձրակրունկ կոշիկները, խորամանկ ժպիտը դեմքին, վրա բերեց.

- Սա միակ դեպքն է, որ ես համաձայն եմ Բեռլուսկոնիի հետ:

Մեդվեդեւը, որին հաճախ սխալվելով Պուտին էին անվանում, ոտքի չկանգնեց, սակայն նստած տեղից ռեպլիկի կարգով միջամտեց.

- Բարի լինեիք՝ ժամանակին պահպանեիք ձեր ամբողջականությունը: Մենք գրեթե ամբողջությամբ պահպանել ենք մեր Ռուսական կայսրությունը, այսօրվա համար ոչ մի պահանջ չունենք:

Չինաստանի ղեկավարը, որի անունը դժվար էր արտաբերվում, եւ որն այսպիսի համաժողովներին հազվադեպ էր ներկա լինում, չդիմացավ, Մեդվեդեւից հետո խոսք վերցրեց.

- Երեք հարյուր տարի չին-տիբեթական կամ, ինչպես ռուսներն իրենք են ասում, թաթար-մոնղոլական լծի տակ մնացած երկիրն այդպես խոսելու իրավունք չունի, մեր Չինգիզ խանի սերունդները երբեք չեն հանդուրժի պատմական այդ անարդարությունը:

Թուրքիայի վարչապետ Էրդողանը զգաց, որ եկել է ճիշտ ժամանակը խոսքի մեջ ընկնելու համար.

- Հարցը միանգամայն ճիշտ է տրված, տարածքային ամբողջականությունն ավելի գերադասելի է, քան ազգերի ինքնորոշումը: Այդ տեսակետից մենք էլ տուժած ազգ ենք, ո՞ւր են մեր Օսմանյան կայսրության հսկա տարածքները:

Հունաստանի ղեկավարը չդիմացավ.

- Ով, ով՝ դուք խոսելու տեղ չունեք: Քոչվոր ցեղեր, եկաք, ներխուժեցիք Հայոց եւ Բյուզանդիայի տարածքներ, հրի ու սրի մատնեցիք տեղաբնակ ժողովուրդներին, հիմա էլ առանց ամոթի տարածքային ամբողջականություն եք պահանջում: Հայերի ցեղասպանության համար միշտ պատասխան տաք:

Վեճին միջամտեց Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորության ներկայացուցիչը՝

- Հանգստացեք, պարոնայք, թողեք մարդն իր կարծիքը հայտնի:

Էրդողանին կարծես բռնել էին, բաց թողին.

- Հերիք չեղավ էդ հայերի ցեղասպանությունը մատի փաթաթան շինեք: Էդ հայերը չէի՞ն, որ կռվի ժամանակ ռուսների կողմն անցան, էդ հայերը չէի՞ն, որ մեր եղբայր Ադրբեջանին օրուարեւ չէին տալիս, էդ հայերը չե՞ն, որ օկուպացրել են խեղճ Ադրբեջանի տարածքների քառորդը, էդ ամենը հերիք չէ, հիմա էլ ազգերի ինքնորոշման իրավունք են առաջ քաշում: Ոչ մի սահմանի բացում, ոչ մի ինքնորոշում, մենք մեր եղբայրներին մենակ չենք թողնի էդ ագրեսոր հայերի դեմ: Մոռացեք հայերի ցեղասպանությունը:

Բարաք Օբաման, հայացքը սեւեռուն ուղղելով Էրդողանի կողմը, ոտքի կանգնեց՝

- Էրդողան, հերիք եղավ, բոլ եղավ, համբերությունն էլ սահման ունի, իմացած լինես, որ ես իմ խոսքը հետ չեմ վերցնի Հայոց ցեղասպանության հարցով: Էսօր-էգուց մեր Կոնգրեսում կճանաչենք ցեղասպանությունը, հետո արդեն ներում, բեկում չի լինի:

- Ճանաչում եք՝ ճանաչեք: Էդ ո՞ր մեկդ անմեղ արյուն չեք թափել, մոռացե՞լ եք Վիետնամը, Իրաքն ու Աֆղանստանը, Չեչնիան ու Ալժիրը, չինացիների Ույգուրն ու հայերի Խոջալուն, գերմանացիների Հոլոքոսթն...

Այս խոսքի վրա Գերմանիան վեր թռավ տեղից, բացականչեց.

- Առաջարկում եմ Էրդողանին դուրս հանել տիեզերաժողովից: Նա եկել է բոլորովին ուրիշ քաղաքակրթությունից:

Սարկոզին լրացրեց.

- Առաջարկում եմ Եվրոպայի դռներն ու պատուհանները պինդ փակել Թուրքիայի առջեւ:

- Փակում եք, փակեք, մենք էլ Բոսֆորն ու Դարդանելը կփակենք: Իմացած եղեք, որ այլեւս Բաքվի նավթի ու գազի հոտ չեք առնի: Ձեր հրթիռներն ու բազաները մեր երկրից հավաքեք տարեք, պարոն Օբամա:

Մի պահ չարագուշակ լռություն տիրեց: Մեծ Բրիտանիան, որը նախագահում էր տիեզերաժողովը, առաջարկեց կոնսենսուսի գալ: Ի վերջո որոշվեց առայժմ օրակարգից հանել հարցի քննարկումը՝ իրավիճակի կայունացման եւ մեծ տերությունների շահերի հստակեցման նպատակով:

ՄՆԱՑԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հրազդան

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

## Հայկական ծերանոց Աթենքում

*Այստեղ խնամք է գտնում 38 ծեր*

**Աթենքի բանուկ եւ նեղլիկ փողոցներից մեկում գտնվող շենքի մուտքին հայերեն գրված է «Հայկական ծերանոց»: Այս շենքում իրենց ապաստան են գտել 38 ծեր: Եվ թեպետ ծերանոցը հունահայոց ազգային առաջնորդարանի նախաձեռնությամբ հիմնադրվել է համայնքի հայ ծերերին ապաստանելու նպատակով, այսօր այստեղ խնամք եւ հոգատարություն են գտնում նաեւ հույները: Ծերանոցում ապրող 38 ծերերից միայն 17-ն են հայ:**



80-ամյա Գոհար Սամուելյանը ծերանոցում է մի քանի տարի: Լայն ժպիտով եւ խորունկ աչքերով Գոհար Սամուելյանն օրվա մեծ մասը զբաղված է իր տարեկիցների հետ զրուցելով կամ էլ հեռուստացույց դիտելով: Աշխատանքին սովոր **Գոհար Սամուելյանի** բողոքը մեկն է. «Այստեղ ամեն ինչ պատրաստ է, եւ շատ եմ պարապ: Ուզում եմ ինչ-որ գործ անել, օգտակար լինել»: Տիկին Գոհարի ծնողները գաղթել են 1922 թվականին, ծնվել է արդեն Աթենքում, սակայն հայերեն խոսում է վարժ: Ունի մեկ որդի, որի այցին սպասում է ամեն օր:

Ծերանոցի տնօրեն Աղավնի Խանիկյանը պատմում է, որ ծերերի օրն սկսվում եւ ավարտվում է զավակներին սպասելով: Այստեղ ապրող 38 ծերերի միայն 5-6-ի զավակներն են այցելում:

Շենքի երկրորդ հարկում գտնվող լուսավոր ու մեծ սենյակներից մեկում ամեն օր առավոտյան ծերանոցի բնակիչները հավաքվում են միասին սրճելու: Խնամված եւ կոկիկ Հռիփսիմե Քերեմյանը սրճելու ժամը ծերանոցի բնակիչների համար վերածել է իսկական արարողության: Նրա շնորհիվ է, որ այս մի քանի ժամը վերածվում է հետաքրքրական զրույցի: Հռիփսիմե Քերեմյանի սենյակի դուռը ծերանոցի տնօրենն առանձնակի հպարտությամբ է բաց անում: Սենյակի մի անկյունում հարազատների լուսանկարներն են, սեղանին ծաղիկներ են դրված, իսկ սենյակը փայլում է առանձնակի մաքրությամբ: Սեղանին մշտապես քաղցրավենիք է դրված. հարազատների համար է, որոնք ամեն պահի կարող են հյուր գալ: «Այստեղ լավ եմ զգում, ընկերուհիներ ունեմ», ասաց **Հռիփսիմե Քերեմյանը**: Աղավնի Խանիկյանը պատմում է, որ տիկին Հռիփսիմեն բողոքել չի սիրում, սիրում է լավը տեսնել եւ իրեն շրջապատել գեղեցիկով:

Ծերանոցում կարող են բնակվել շուրջ 50 մարդ: Աղավնի Խանիկյանը նշում է, որ հույներին սկսել են ընդունել վերջին տարիներին, քանի որ ծերանոցը կարիք ուներ լրացուցիչ վճարների: Ծերերից շատերը բժշկական խնամքի կարիք ունեն:

Հայկական ծերանոցը գործում է արդեն 65 տարի: Եկեղեցի եւ դպրոց հիմնելուց հետո հունահայ համայնքը կառուցում է ծերանոցը:

ԱՐԵՎԻԿ ԲԱԳԱԼՅԱՆ

## «Եվրոնյուզ»-ին բողոքները շատանում են

**Բելգիայի հայերի համագումարը պաշտոնական նամակ է ուղարկել միջազգային «Եվրոնյուզ» հեռուստաընկերությանը, որով իր բողոքն ու տարակուսանքն է հայտնել վերջին ժամանակներում այդ ալիքի ադրբեջանամետ քարոզչությունից: Նամակում բելգիահայերը մասնավորապես անդրադարձել են «Եվրոնյուզ»-ի պատրաստած ռեպորտաժին՝ ադրբեջանցի փախստականների մասին: «Ազգ»-ը գրել էր, որ վերոհիշյալ ալիքը, պատրաստելով ռեպորտաժ հայկական Ղարաբաղի մասին, ամենայն հավանականությամբ Ադրբեջանի կողմից ենթարկվել է ճնշումների եւ նոր ռեպորտաժ է պատրաստել արդեն Ղարաբաղից գաղթած ադրբեջանցի փախստականների մասին: Բելգիահայերի կարծիքով՝ հեռուստաալիքն այս վերջին նյութով արտահայտում է միայն ադրբեջանական կողմի տեսակետը. «Դուք արտահայտել եք միայն Ադրբեջանի դիրքորոշումը, սակայն այս հին եւ դժվարին հակամարտությունն ավելին է, քան երկկողմանի լինելը: Իհարկե, մենք գիտակցում ենք, որ ադրբեջանական կողմի տեսակետները նույնպես պետք է արտահայտվեն, սակայն մեզ տարակուսանք է պատճառում, որ դուք այդքան հոժարակամ եք ընդունում Բաքվի ցանկությունները: Մենք նաեւ զարմացած ենք այն փաստից, որ դուք, հրապարակելով այդ ռեպորտաժը, մյուս՝ հայկական կողմին էլ հնարավորություն չտվեցիք կարծիք հայտնելու: Այնինչ առանց այդ երկկողմանի կարծիքների եվրոպացի հեռուստադիտողի համար անհնար է հստակ պատկերացնել հակամարտության ողջ էությունը», ասված է նամակում:**

**Բելգիահայերը, կոնկրետ անդրադառնալով «Եվրոնյուզ»-ի «ադրբեջանական» ռեպորտաժին, նամակում գրել են, որ ադրբեջանցի փախստականների կյանքի նկարագրումն ու ցուցադրումը կարող են վրեժի ցանկություն առաջացնել լսարանում: «Ձեր ռեպորտաժով, փաստորեն, տարածվում է հակահայկական ռասիզմը, որն արդեն իսկ կա. ոչ միայն Ադրբեջանում, այլեւ Թուրքիայում, ինչպես նաեւ Եվրոպայի թուրքական համայնքներում «թշնամի հայի» պրոպագանդան բերել է բռնության դեպքերի»: Բելգիահայերի տարակուսանքն ավելի է սրվել, երբ «Եվրոնյուզը» հրապարակեց Ադրբեջանի նախագահի հետ «մեծ ու բովանդակ» հարցազրույցը («Ազգ»-ը գրել էր Ալիեւի այդ հարցազրույցի մասին): Նամակում նշված է, որ Ալիեւի հարցազրույցից հետո էլ «չերեւաց» հայերի տեսակետը: «Այնինչ Ղարաբաղի հակամարտությունը լիարժեք հասկանալու համար պետք է հիշել 1915-ի ցեղասպանությունը եւ այն, որ Թուրքիան ու Ադրբեջանը միշտ ցանկացել են միավորել իրենց տարածքները: Սրա պատճառով է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո Ադրբեջանը թուրքերի օժանդակությամբ հարձակվեց Բաքվում եւ Սումգայիթում ապրող հայերի վրա եւ կազմակերպեց նրանց ջարդը: Չնայած այս ամենին, Ղարաբաղի հայերը դիմացան: Այժմ հարց է առաջանում. սխա՞լ են արել արդյոք նրանք», հարցնում են բելգիահայերը «Եվրոնյուզ»-ին եւ կոչ են անում «ավելորդ կրակ չբացել թուրք-ադրբեջանական «ակտիվ գազի» նմանվող ազգային ծայրահեղության ֆոնին: Բելգիահայերը հորդորում են նաեւ. «Միակողմանի վերաբերմունք չգործածել այս հարցում, քանի որ միայն այդ պարագայում կցրվի այն վախի մթնոլորտը, որը կա ինչպես Հայաստանում եւ Ղարաբաղում, այնպես էլ աշխարհասփյուռ հայության կյանքում»:**

**Նամակը ստորագրել է Բելգիայի հայերի համագումարի ղեկավար Միշել Մահմուրյանը:**

Հ. Ա.

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վալերի եւ Զոյա Մարկարյանները ցավակցում են Ստելլային եւ Ռոզային սիրելի ամուսնու եւ եղբոր՝

**Պավել Պողոսի Խաչատուրյանի**

մահվան կապակցությամբ:

**Մրցույթի հրավեր 042/10/PRO**

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝ 3 պետական քոլեջներում տպագրական-հրատարակչական կաբինետներ ստեղծելու համար սարքավորումներ մատակարարելու նպատակով:

Մրցույթի մանրամասն հրավերին կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի **http://www.undp.am** ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից Երեւան, Պետրոս Ադամյան 14 հասցեում:

Դիմել Գրիգոր Ախնոյանին՝ հեռ. 56 60 73+126 (ներքին), ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ ս.թ. մարտի 15-ը, ժամը 17:00-ը:

UNDP

«Հայինկասացիա» ՓԲԸ-ն գարնանային տոների առթիվ, փետրվարի 25-ից մինչեւ ապրիլի 10-ը կնքվող նոր պայմանագրերի համար հայտարարում է տարբեր տեսակի զեղչեր:

ՇՏԱՊԵՔ ԲԱՑ ՉԹՈՂՆԵԼ ՁԵՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ:

**Հեռ. 285371, 201372**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 24.2.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: